ՀՅԴ Պաշտօնաթերթ







# ԴՐՕՇԱԿ





Դեկտեմբեր N12 (1615)

2009

ԴՐՕՇԱԿ
ՀՅԴ Պաշտօնաթերթ



# ԴՐՕՇԱԿ
ՀՅԴ Պաշտօնաթերթ





"Դրօշակ"
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր` **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր`
**Ռուբեն Հովսեփյան**

Խմբագիր` **Կ. Խանլարյան**
Համակարգչային շարվածքը`
**Ս. Խաչատրյանի**
Ձեւավորումը` **Մ. Հովսեփյանի**

Ոճը` **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Մհեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը` «Բավիղ» ՍՊԸ-ի

**"Droshak"** monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am



Հարցազրոյց

Դաշնակցությունը գնում է հիմնական լուծումների 2

Տեսակէտ

«...Այս ընդհանուր աղէտը մեծ»

Կամ` դէմքերը Թուրքիոյ կողմէն դիտուած 9

Նյութեր թուրք պատմաբանների համար

Մի կողմ թող Դաշնակցության արխիվը,

տե՛ս օսմանյանը 13

Տեղեկանք

Հրեա զինվորի դերը հրեությունում 22

Անցեալ էջեր

Նազարէթ Պէրպէրեան` Դաշնակցութեան

հայրենադարձութիւնը 29

Մեր երախտավորները

Մամուլի եւ համերաշխութեան

զինուոր Եղիշէ Թոփչեան 34

Հայկական օջախ

Այնճար` փոքր Հայաստան մը...

Հայաստանէն դուրս 38

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Դրօշակի շուրջը 45

Նոր գրքեր

Նա տեր էր 46

Պատկերասրահ

Շրքա Ոսկանյան 48



Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY





Digitized by ARF PR Office



# Դաշնակցությունը գնում է հիմնական լուծումների

*«Դրօշակ»-ի հարցերին պատասխանում է ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանտ Մարգարյանը*

**- Ամեն տարվա պես, այս անգամ էլ ՀՅ Դաշնակցությունը նշում է իր հերթական՝ տոնական, բայց եւ հաշվետվական օրը: Ինչո՞վ է առանձնահատուկ այս տարվա Դաշնակցության օրը:**

- Մեզ համար «Ճանաչիր ինքդ քեզ» նշանախոսքը նպատակ ունենալու, ճամփա գնալու եւ տեղ հասնելու ամենաճշմարիտ խորհուրդն է: Մենք այդպես ենք եկել, հասել այսօրվան: Այդպես էլ շարունակելու ենք: Դաշնակցության օրվա, մեր կուսակցության 119-ամյակի նշումը մեզ համար հաշվետվություն ներկայացնելու, արածն ու չարածը քննադատաբար գնահատելու, տարին ամփոփելու առիթ է:

Երբ հայ իրականությունը դեմ առ դեմ է կանգնում որեւէ կարեւորագույն երեւույթի, բնականորեն ալեկոծվում է մեր քաղաքական միտքը, եւ, բնականաբար, այդ ալեկոծությունն իր ազդեցությունն է ունենում մեր կազմակերպության վրա: Անբնականն այն է, որ այդ ամբողջը ուղեկցվում է կրքով, մեր մեջ թշնամիներ որոնելով, հաճախ իրական բանավեճ, քննարկում չի լինում: Միշտ վախ կա, թե կպիտակավորեն, եւ ճիշտ չես հասկացվի:

Ցավոք, սա է մեր մթնոլորտը: Բայց սա չի կարող, պետք չէ պատճառ դառնա, որ ետ կանգնենք մեր հիմնարար սկզբունքներից:

Նոր օրակարգ է հայտնվել մեր կյանքում՝ Հայաստան-Թուրքիա հարաբերությունները: Ի՞նչ ենք անում, ո՞ւր ենք գնում:

Համազգային զարթոնքից հետո վճռական, ծանր ու դժվար տարիներ շատ ենք ապրել. երկրաշարժ, տնտեսական տագնապներ, պատերազմ, անկախության ետծննդյան դժվարություններ: Եվ այդ տարիներից սկսած հարեւան Թուրքիան թշնամական վերաբերմունք է ունեցել մեր հանդեպ: Թուրքիան, Ադրբեջանի հետ միասին, մեր դեմ պատերազմի է դուրս եկել: Նա ընտրել է պատերազմի այլ տարբերակ՝ շրջափակումը:

Սկզբնական շրջանում՝ մինչեւ 1998-ը, Հայաստանը փորձում էր չտեսնելու տալ Թուրքիայի թշնամական կեցվածքը: 1998-ից սկսյալ Հայաստանն իր արտաքին քաղաքականության օրակարգ բերեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը: Արդյունքում բազմապատկվեց մինչ այդ միայն Սփյուռքի ճիգերով Ցեղասպանության հարցի արծարծումը, նորանոր պետություններ ճանաչեցին Ցեղասպանությունը: Թուր-

քիան, որ փորձում է իր տեղն ունենալ Եվրոպայում, հանդիպեց համընդհանուր վերաբերմունքի: Ցեղասպանության ուրացման քաղաքականությանը զուգահեռ՝ Թուրքիան, շրջափակման մեջ պահելով Հայաստանը, բացահայտում էր իր հակահայ, ցեղասպան պետություն լինելու իրողությունը: Թուրքիան ճնշման էր ենթակա հատկապես շրջափակմանը վերջ տալու հարցում: Նրա համար ապաշրջափակումը Եվրոպա մուտքի նախապայման էր:

Սահմանի բացումը, ինչպես ցանկացած պետության, մեզ համար նույնպես կարեւոր է: Սակայն մենք պետք է կարողանայինք սպասել, մինչեւ ճնշումներն արդյունավորվեին, եւ հարցի լուծման նախանշաններ տեսնեինք թուրքական կողմից: Նախանշան կարող էր դառնալ սահմանները բացելու դիմաց թուրքական կողմի հրաժարումն իր հայտարարած նախապայմաններից:

Վրաստան-Ռուսաստան պատերազմը փոխեց կացությունը տարածաշրջանում: Մի կողմից Հայաստանը զրկվեց իր ռազմական դաշնակից Ռուսաստանի հետ ցամաքային կապից, մյուս կողմից՝ Ռուսաստանում անհրաժեշտություն ստեղծվեց շրջանցել Ուկրաինան ու Վրաստանը եւ նոր հաղորդակցության ուղիներ փնտրել դեպի Եվրոպա: Իսկ Արեւմուտքը կարծես բավարարվեց տարածաշրջանում Թուրքիայի դերակատարությամբ եւ հակաիրան ճակատի հարդարումով, ուր սկսեց գործուն մասնակցություն ունենալ Ռուսաստանը:

Հայաստանի համար ավելի կարեւոր էր դառնում ՀՀ-Թուրքիա սահմանի բացումը, սրանում շահագրգիռ էին նաեւ մեծ ուժերը: Շահագրգռություն, որ բնականորեն իր հետ բերելու էր ճնշումներ Հայաստանի եւ Թուրքիայի իշխանությունների հանդեպ: Սերժ Սարգսյանը նախաձեռնեց ֆուտբոլային դիվանագիտությունը, որ, թվում էր, պետք է առավելություններ ապահովեր Հայաստանի համար. հնարավոր ներքին անկայունությունը ստվերի տակ էր առնվում այս նախաձեռնությամբ, հույս կար, որ կապահովվի մեծ ուժերի զորակցությունը: Բայց այդպես չեղավ:

**- Ինչո՞ւ:**

- Նախաձեռնության սկիզբը Մոսկվայում էր եւ հատկանշվեց զիջման հայտարարությամբ. հիշո՞ւմ եք՝ հայտարարվեց, թե Հայաստանը պատրաստ է ընդունելու Անկարայի՝ պատմաբանների հանձնաժողով ստեղծելու առաջարկը: Ճիշտ է, հետո հերքվեց այս լուրը, իբր, թյուրիմացություն է եղել, սակայն գիտենք՝ նման թյուրիմացություններ չեն լինում:

Չեմ հավակնում որեւէ մեկին դաս տալ, մանավանդ՝ մարդկանց, որոնց փորձն այս հարցում ավելի մեծ է, քան իմը, սակայն երբ կռվում զիջում ես դիրքերդ, հաճախ դա ոչ թե խաղաղությամբ է ավարտվում, այլ՝ պարտությամբ: Իսկ մենք չգիտակցեցինք, որ մեր հարցը՝ սահմանների փակումը, ոչ թե ինչ-որ տհաճ հարաբերությունների արդյունքում է ստացվել, այլ Թուրքիան Ադրբեջանի կողքին մեր դեմ պատերազմի դուրս գալով եւ սահմանափակ զիջումով չի բավարարվելու, ձգտելու է մեր ամբողջական պարտությանը: Հետագա փաստերն ապացույցն են այդ իրողության:

Մենք պետք է նաեւ գիտակցեինք. քաղաքական այն շահագրգռությունը, որ մեզ մղում կամ ստիպում էր շուտափույթ կարգավորել հարաբերությունները Թուրքիայի հետ, անիմաստ էր, եթե անլուծելի էր մնում Ղարաբաղի հարցը: Եթե ոչ ամբողջությամբ, գեթ ազատագրված տարածքների կտրվածքով, ինչը հնարավորություն պետք է տար Ադրբեջան-Հայաստան-Թուրքիա երկաթուղու վերականգնման եւ էներգետիկ հաղորդամիջոցների ստեղծման: Մինչդեռ Հայաստանը օրն ի բուն խոսում էր ազատագրված տարածքները զիջելու իր պատրաստակամության մասին:

**- Մեր իշխանություններն ինչո՞ւ էին ոդեգրել նման կեցվածք: Միջազգային պարտադրա՞նք էր, թե՞ դիվանագիտական հմտության պակաս:**

- Ցանկացած հարցի լուծման ժամանակ, ավաղ, նկատի չի առնվում՝ ով է արդար, ով՝ անարդար, ով է համեստ ու ճկուն, ով՝ անզիջող. հարցերի լուծման սեղանի շուրջ նաեւ դերակատար է բանակցությունների արվեստն ու գիտությունը: Իսկ ով ցույց է տալիս զիջման տրամադրություն, ճնշումներն առաջին հերթին ուղղվում են նրա վրա: Ստացվում է, որ Հայաստանը, պատերազմից հաղթանակած դուրս գալով, պարտվում է: Հանուն ինչի՞ անհասկանալի է:

Վստահ եմ, այո, կար միջազգային շահագրգռություն Հայաստան-Թուրքիա եւ Հայաստան- Ադրբեջան հարաբերությունների կարգավորման, նույնիսկ շուտափույթ կարգավորման հարցում: Սակայն չէր կարող լինել շահագրգռություն Հայաստանի կողմից Թուրքիայի նախապայմաններն ընդունելու



ՀՅԴ 119-ամեակի հանդիսություն, Երեւան,
*Սունդուկյանի անվան թատրոնում, 2009 թ. դեկտեմբեր*

հարցում, չկար նման ճնշում: Մենք զիջել ենք նախքան բանակցությունները՝ մեր հայտարարություններով, որովհետեւ խորապես չենք գիտակցել զիջման հետեւանքները:

Եթե նույնիսկ կար ճնշում թուրքական նախապայմաններն ընդունելու հարցում, իշխանությունները պետք է ամուր, անզիջող կեցվածք ունենային, պետք է դիմեին քաղաքական ուժերին ու ժողովրդին, ապահովեին համազգային զորակցություն, ժողովրդին պետք է ոտքի հանեին: Բայց հայտնի է, որ այն իշխանությունն է ի վիճակի այդ ամենն անել, ով ապրում է իր ժողովրդի հետ հաշտ, եթե իր երկրում արդարություն է հաստատել... եթե..., բայց արդեն ուշ է:

**- Ուզում եք ասել՝ ճնշումները երկկողմանի՞ էին, թե դրսից է ենթադրվում ճնշումը եւ թե ներսո՞ւմ է առկա:**

- Հասկանալի է, այդ ճնշումներին հեշտ չէ դիմանալը. մեկից կախված է մեր ռազմավարական անհրաժեշտությունների բավարարումը, մյուսը մեր մեջ լծակ ունի՝ բերդը ներսից գրավելու՝ անկայունություն պարտադրելու:

Բայց կա մեր ժողովուրդն իր անսպառ կարելիություններով: Պետք է սիրենք, հոգատարություն ցուցաբերենք եւ վստահենք մեր ժողովրդին:

Եվ ի՞նչ ստացվեց: Մենք ընդունեցինք թուրքական նախապայմանները, սակայն Թուրքիան նույնիսկ այս արձանագրությունները հապաղում է վավերացնել, որովհետեւ իր եւ Ադրբեջանի պատերազմը Հայաստանի դեմ ավարտված չէ, ցանկանում է ամբողջական պարտության մատնել մեզ, ու շարունակում է ճնշումը, նորանոր զիջումներ է պահանջում: Այսինքն՝ շարունակում է պատերազմել Հայաստանի դեմ, փակ է պահում սահմանը, չի վավերացնում արձանագրությունները, որպեսզի Ղարաբաղի հարցով եւս հասնի իր նպատակին, եւ կարծես, հաջո-




դում է: Եթե ճնշվող կա, միշտ լինելու է ճնշողը:

Պարտությունը չարիք է: Քաղաքական, ազգային կամք է պետք դրսեւորել՝ կասեցնելու պարտության ընթացքը: Վտանգված է նաեւ մեր ազգային միասնությունը:

**- Իրո՞ք այդչափ շոշափելի է ազգային միասնության ճաքը:**

- Մեր իրականությունը երկփեղկվել է: Մենք դեմ ենք այս տեսակ արձանագրություններին, ուրիշները կողմ են: Մի առիթով ասել եմ. արձանագրություններից ավելի մեծ վտանգի առջեւ ենք կանգնած՝ ազգի պառակտման խնդրի: Ի՞նչ անենք, որ երկփեղկումը առճակատման, թշնամանքի չվերածվի:

Մենք հակաթուրք չենք, եւ մյուս կողմն էլ թրքամետ չէ: Մենք դեմ ենք Թուրքիայի ուրացման քաղաքականությանը, Թուրքիայի հակահայ քաղաքականությանը, սակայն մենք կողմ ենք հայ-թուրք հարաբերությունների վերականգնմանը, սահմանի բացմանը: Մենք դեմ ենք ստորացուցիչ պայմաններին, դեմ ենք որեւէ նախապայմանի ընդունման:

Ասում են՝ Դաշնակցությունը դեմ է, եւ դա բնական է: Բայց ինչո՞ւ է բնական: Ասում են ու տարածում՝ նոր ներդրում անելով բոլշեւիկյան, ՀՀՇ-ական քարոզչության կապիտալի վրա. Դաշնակցությունը հակաթուրք կազմակերպություն է, ինչ պայմանագիր էլ ստորագրվի, նրանք դեմ են լինելու: Սուտ է, դեզինֆորմացիա է: Ճիշտ է, մենք պայքարի ամենից մեծ պատմությունն ունենք թուրքական պետության դեմ, սակայն եւ ամենից շատ ենք ճաշակել թուրքերի հետ գործ բռնելու դառը հետեւանքները: Մենք մեկ անգամ եւս հայտարարում ենք. մենք դեմ չենք հարաբերությունների ստեղծմանը եւ սահմանների բացմանը, սակայն մենք դեմ ենք ստորագրված այս արձանագրություններին:

Դեմ ենք, որովհետեւ իշխանությունները ընդունել են թուրքական նախապայմանները. ճանաչելով

թուրքական սահմանը՝ հրաժարվել են մեր հայրենիքի ամբողջականության արդար պահանջից:

Թուրքիայի վարչապետը հայ-թուրքական արձանագրությունների կից գրությամբ այսպես է ներկայացրել արձանագրությունների կարեւորությունը Թուրքիայի համար իրենց Ազգային Մեծ Ժողովում. «Արձանագրությունների մեջ երկու երկրների միջեւ գոյություն ունեցող ընդհանուր սահմանը փոխադարձ ճանաչվում է՝ սահմանված միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով: Այս կետը եւս մեկ անգամ վերահաստատվում է Հայաստանի հետ գոյություն ունեցող մեր ընդհանուր սահմանի իրավական հիմքը կազմող Կարսի պայմանագրի իրավական ուժ ունենալը եւ պարտավորեցնելը»:

Արձանագրություններով այսօրվա իշխանությունները ճանաչել են Թուրքիա-Հայաստան սահմանը: Թուրքիան այսպես է ներկայացնում հաչս աշխարհի, մենք ի՞նչ ունենք պատասխանելու: Սեւով ճերմակի վրա գրված փաստի եւ հաչս միջազգային հանրության ներկայացված մեկնաբանությունների, մեր իշխանությունները հավաստիացնում են. թուրքական ոչ մի նախապայման ընդունված չէ: Ի՞նչ անի մեր ժողովուրդը կամ միջազգային հանրությունը՝ հավատա սեւով ճերմակի վրա գրված, օրնիբուն պաշտոնական Թուրքիայի կողմից շեփորված փաստի՞ն, թե՞ մեր իշխանությունների թույլ, անհամարձակ հավաստիացումներին:

Ու մեր ընդդիմախոսներն անմիջապես մոռանալու են, թե հավաստիացում են տվել, որ որեւէ նախապայման չի ընդունվել, ու հնչեցնելու են մեղադրանքների շարանը. «Դուք կարծում եք՝ հնարավո՞ր է դիվանագիտական հարաբերություններ ստեղծել մի երկրի հետ՝ առանց ճանաչելու տվյալ երկրի սահմանները»:

Այո, ոչ միայն կարծում ենք, այլեւ դա է ասում միջազգային փորձը: Ե՞րբ է եղել, որ դիվանագիտական հարաբերություններ ստեղծող փաստաթղթում ճանաչվի նաեւ գործող սահմանը: ՄԱԿ-ի անդամ 200-ից ավելի պետություններից շուրջ 140-ը, որոնք միմյանց հետ ունեն դիվանագիտական հարաբերություններ, ունեն նաեւ սահմանների հարց, բայց դա չի խանգարել նրանց հարաբերություններ ստեղծել: Դեռ նոր է Սիրիա-Թուրքիա հարաբերությունների սերտացման փաստը, բոլորին ծանոթ է, որ Սիրիան տարածքային հարց ունի Թուրքիայի հետ: Վստահ եմ՝ Թուրքիան Սիրիայից էլ է պահանջել ճանաչել իր սահմանները, բայց Սիրիան գլուխ չի ծռել, ու վերջ: Դա է իրողությունը:

Մենք հասկանում ենք այսօր Հայաստանը հնարավորություն չունի Թուրքիայից հողային պահանջի օրակարգ ունենալ, սակայն պահանջ ներկայացնելը մեկ հարց է, պահանջից հրաժարվելը՝ այլ: Մենք չենք կարծում, թե այսօր հողային պահանջ պետք է ներկայացնենք Թուրքիային, բայց այսօրվա իշխանություններին ո՞վ է տվել իրավունքը, այսրոպեական հաշիվներից մեկնած, մեր սերունդների իրավունքը մանրադրամի վերածել:

Գիտեմ՝ շուկայական հաշիվներով ապրող, նույնիսկ պետական հանգամանքի տեր դարձած մարդկանց համար սերունդների իրավունքը ոչ մի բան ասող հասկացություն է, լավագույն դեպքում այն կարող է համարվել ռոմանտիզմ: Թող լինի ռոմանտիզմ, ոչ ոք իրավունք չունի այդ ռոմանտիզմից զրկել մեր ժողովրդին: Ռոմանտիզմը կենսական անհրաժեշտություն է մեր ժողովրդի համար: Ժողովուրդը պետք է ունենա տեսիլք, հեռանկար, որպեսզի իբրեւ ազգ ապրի եւ զարգանա, հարատեւի եւ իր բաժին մասնակցությունն ունենա համամարդկային արժեքների ու քաղաքակրթության կերտման գործում:

Սրանից 30 տարի առաջ ոչ մի «իրատես» քաղաքական գործիչ չէր կարող հաշվարկել, որ հայկական Արցախն այդքան շուտ կարող է Հայաստան դառնալ: Մենք վստահ ենք՝ եթե ոչ մեր սերունդը, ապա մեր զավակները, մեր թոռները տեսնելու են ազատ Վանը, Կարսը, Արդահանը՝ իբրեւ Հայաստան: Ով չի հավատում այս իրողությանը կամ երազանքին, նա չի կարող ղեկավարել Հայկական պետականությունը:

**- Նկատի ունեք արձանագրություններում նշված պատմական հարթությամբ զբաղվող ենթահանձնաժողովի ստեղծմա՞ն հարցը:**

- Արձանագրություններով իշխանություններն ընդունում են, որ պատմական հարթությամբ զբաղվող ինչ-ինչ ենթահանձնաժողովի կողմից, հայ, թուրք, շվեյցարացի եւ այլ միջազգային փորձագետների մասնակցությամբ, քննության նյութ դառնան պատմական փաստաթղթեր, արխիվներ: Սակայն իշխանությունները պնդում են, թե խոսքը Հայոց ցեղասպանությանը չի վերաբերում: Ինչի՞ն է վերաբերում հապա, եթե այդպես են հասկանում, մեկնաբանում պաշտոնական Թուրքիան, ԱՄՆ-ն, Եվրա-

միության ղեկավարները, միջազգային այլ դեմքեր:

Մինչդեռ իշխանությունները մերկ հավաստիացումներ են տալիս. Ցեղասպանության հարցը քննության ենթակա չէ, ու դեռ ուժ են տալիս իրենց կոկորդին, ոչ, եւ հարյուր անգամ ոչ են գոռում: Եթե այդպես է, ինչո՞ւ էիք ընդունել այս արձանագրությունների հիշյալ տարբերությունը, ի՞նչ պատմական հարցերի հստակեցման համար էր անհրաժեշտ միջազգային փորձագետների մասնակցությամբ քննության նյութ դարձնել արխիվները, ո՞ւմ էիք խաբում՝ միջազգային հանրությա՞նը, Թուրքիայի՞ն, թե՞ սեփական ժողովրդին: Եվ ինչո՞ւ այս ընթացքում, հակառակ Թուրքիայի ակտիվ դերակատարության, դուք հրաժարվեցիք նվազագույն աջակցություն ցուցաբերել Ցեղասպանության հարցի միջազգային, մասնավորապես՝ ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից ընդունման ճիգերին:

Այսօր այս բեմից առաջարկում եմ. եթե անկեղծ էիք, թող Սահմանադրական դատարանն իր մեկնաբանություններով, իսկ Ազգային ժողովը՝ իր վերապահումներով հստակեցնի, որ Ցեղասպանության հարցը որեւէ կերպ քննության նյութ չի կարող լինել, թող հստակեցվեն արձանագրությունների խնդրահարույց կետերը: Հստակ, իրավական ձեւակերպում պետք, որ Հայաստանի Հանրապետությունն այդպես չի հասկանում եւ չի ընդունում, որպեսզի նվազագույնի հասնի ձեր մեղքի բաժինը: Հենց այս օրերին Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը դարձյալ ԱՄՆ-ի Կոնգրեսում քննության նյութ դարձնելու աշխատանք է տարվում: Թող նախագահ Սերժ Սարգսյանն իր հերթին դիմի ԱՄՆ-ի կոնգրեսականներին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման հորդորով:

Հայոց ցեղասպանության հարցը ո՛չ պատմական թեմա է, ո՛չ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման սակարկության նյութ: Այս հարցը հայ ժողովրդի, ի դեպ՝ բովանդակ հայ ժողովրդի, խոցված արժանապատվության հարցն է, Հայաստան պետության անվտանգության հարցն է: Ով չի գիտակցում այս իրողությունը՝ հավանաբար կարող է զանազան պետություններում ղեկավար պաշտոններ վարել, բայց ոչ երբեք հայկական պետությունում:

Չկա առանձնաբար հայկական Սփյուռք, հայրենաբնակ ժողովուրդ, կա մեկ ամբողջականություն՝ հայ ազգ, որն ունի, պետք է ունենա նույն օրակարգերը, նույն հոգսերը, եւ պատասխանատու լինի մեր ընդհանուր ճակատագրի համար:

Որեւէ անվան տակ, որեւէ կերպ ազգը պառակտելու փորձերը դատապարտելի եւ անընդունելի են մեզ համար: Բոլոր այն քարոզչությունները, թե Ցեղասպանության հարցը սփյուռքահայությանն է միայն, բոլոր փորձերը՝ Սփյուռքն առանձնաբար կազմակերպելու կամ Սփյուռքը պիտակավորելու, նույնպես ծառայում են պառակտման նպատակին:

Ժամանակն է խորհել եւ, այլ ժողովուրդների ու պետությունների փորձը նկատի ունենալով, գտնել ուղիներ՝ ՀՀ ընդլայնված Ազգային ժողովում սփյուռքահայությանը հասնող տեղեր վերապահելու. ներպետական հարցերում նրանք կունենան խորհրդակցական ձայնի, իսկ համահայկական օրակարգերում՝ վճռական ձայնի իրավունք: Ազգի միասնությունը նաեւ արտահայտված պետք է լինի պետական կազմակերպվածությամբ:

Ազգի պառակտմանն են ծառայում նաեւ կեղծ օրակարգերը, որոնք ժամանակ առ ժամանակ հրապարակ են նետվում, օրինակ՝ պետական եւ ազգային շահերի տարբերության ու հակադրության մասին իբրեւ թե քննարկումները:

Չկա «պետական շահ», «ազգային շահ» հասկացությունների միջեւ հակադրություն, կա ազգային պետականություն, որն ազգի հարատեւության, անվտանգության, զարգացման երաշխավորն է, եւ՝ կա ազգ, որի համար պետականությունը, նրա պահպանումը, անվտանգությունն ու կենսունակության ապահովումն իր հավաքական եւ ընդհանուր իղձերի իրականացման համար, հիմնական միջոց է: Ազգի կազմակերպվածության գերագույն ձեւը պետականությունն է: Առանց պետականության՝ ազգային իղձերի իրականացումը ցնորք է, պետականությունը միջոց է, որ չի կարելի առանձնացնել հիմնական նպատակից:

**- Հիմա՝ մեր, մեր ներքին քաղաքական իրականությունների ու Դաշնակցության մասին խոսենք:**

- Եթե մի քիչ խորանանք ներքին քաղաքական իրականության մեջ, կթվա, թե քաղաքական ուժերն ավելի շատ մտահոգ են, թե Դաշնակցությունն ինչ պետք է անի եւ ինչը ճիշտ չի անում: Ոչ մի խոսք այն մասին, թե ինչ կարծում են Դաշնակցությունը պետք է անի, իրե՞նք ինչու չեն անում. մեր դեմ հակաքարոզչություն է աշխատում. իբր՝ մեր ընդդիմա-

դիր տահվածfը cինծու խաղ է, nr խաղում եՌf հա-մաձայնեցված նախագահ Սերժ Սարգսյանի հեs: Հեsաfrfիrն այն է, nr այս fաrnզչության հեsամnւs են թե՛ իշխանությունները եւ թե՛ ՀՀԸ-ական ընդդի-մությունը: Երկուսն էլ մsաhոգ են, երկուսն էլ չեն ցանկանում թույլ sալ իrենցով ձեւավnrված երկու բեւեռներից դուրս nrեւէ իՌfնուrույն nւժ կայանա: Նրանf փnrձում են իrենցով ղեկավարելի դաhել ամբողջ fաղաfական դաշտը: Եթե չի hաջողվում, փnrձում են fաrnզչական այնպիսի մթնոլnrs սsեղ-ծել, nr մյուսներն ակամա անեն այն, ինչ իrենf են nւզում, այլապես կդիsակավnrվեն: Այsօr, երբ աprում եՌf fաrnզչության սիաբեկչության մթնո-լnrsում, երբ իrականությունները խեղաթյուրված են ներկայացվում մեr ժողովրդին, hասաrակությունն այս ժխորի մեջ դժվար է կողմնnrnշվում: ՄեՌf պեsf է ցաrունակեՌf մնալ իՌfնավսsահ, իՌfնու-րույն, hասաsակամ: Մեr nւղին ճիշs է, աrդար է, մեՌf hաղթելու եՌf:

**- Դաշնակցությանը մեղադրում են, nr իr ամ-բողջ nւժով չի hաrվածում, չի պայfաrում իշխա-նափոխության hամար:**

- Իhարկե, այսsեղ խոսfը մեթոդների մասին է եւ երբեf էության: Բայց, այդուամենայնիվ, ճիշs են ա-սում, nrովհեsեւ մեՌf պաsասխանաsու կուսակցու-թյուն եՌf եւ երբեf չեՌf աշխաsելու օsաrի hամար Մեr պայfաrից պեsf է շահի մեr երկիrն ու ժողովուr-դը, մեr գաղափարական շաrժումը: Պաsասխանա-sու nւժը պեsf է hաշվաrկված պայfաrի դուrս գա, hաrվածներիդ թափը չպեsf է գեrազանցի fn իrա-կան hնաrավnrություններին եւ պեsf է իՌfնուrույն nւ-ժի վrա hիմնված լինի, այլապես այդ պայfաrը կվե-րածվի աrկածախնդrության, կննաս կես ճամփին կամ վասը կփոխաrինեs ավելի վասով:

ՄեՌf պայfաrում եՌf ավելի լավ Հայասsանի hամար: Ամենօrյա աշխաsանfով մեr ծրագրերի շուrջ մեՌf պեsf է hամախմբեՌf գիsակից ժողո-վուrդ եւ աpahովեՌf ամենfիս hաջողությունը, nr լինելու է իrապես hաջողություն եւ sեւական hա-ջողություն: Աpa թե ոչ՝ ընդդեմի ու hակադրու-թյան ֆոնի վrա, աsելությամբ կուrացած ամբոխի վrա hիմնված nւժը, nr չգիsի՝ ինչի hամար, nr ծրագրի hամար է դուրս եկել hrապարակ, միայն ժամանակավnr hաջողություն կաrող է nւնենալ՝ իrականում, սակայն, hեռացնելով վեrջնական hաղթանակի օrը:

**- Ծրագրվա՞ծ են hեsագա աշխաsանfները:**

- ՄեՌf աrդեն hrաsաrակել եՌf Դաշնակցու-թյան նոrացված ծrագիrը, nrի շուrջ պեsf է hա-մախմբեՌf մեr ժողովրդին եւ fայլեՌf առաջ՝ fաջ գիsակցելով, թե nւr եՌf գնում:

ՄեՌf hեsամnւs եՌf լինելու մեr երկրում սոցիա-լական աrդաrության hասsաsման գnrծին, nrովhե-sեւ ազգային hաrցեr nւնեցող nrեւէ ժողովրդի hա-մաr սոցիալական աrդաrության hասsաsումն ան-խուսափելի անhrաժեշsություն է ազգային-պեsա-կան շահեrը պաշsպանելու, իՌfնիշխան պեsու-թյուն լինելու ճանապաrhին:

ՄեՌf hեsամnւs եՌf լինելու, nr Հայասsան երկ-րում բաrnյահոգեբանական առողջ մթնոլnrs սsեղծվի, hամեrաշխություն, ներfին կայունություն sիrի: Nr մեկս մյուսին իrեւ եղբոr ու ազգակցի նա-յեՌf, nr օrենfի առաջ բոլորը hավասաr լինեն, nr բացառվի ամենաթողությունն ու զոռբայությունը:

ՄեՌf hեsամnւs եՌf լինելու մեr երկրում սոցիա-լական աrդաrության hասsաsման գnrծին, nrովhե-sեւ ազգային hաrցեr nւնեցող nrեւէ ժողովրդի hա-մաr սոցիալական աrդաrության hասsաsումն ան-խուսափելի անhrաժեշsություն է ազգային-պեsա-կան շահեrը պաշsպանելու, իՌfնիշխան պեsու-թյուն լինելու ճանապաrhին:

ՄեՌf hեsամnւs եՌf լինելու, nr աrաrելու, սsեղ-ծելու, մեr իՌfնաsիպ մշակույթը լիաrժեf զաr-գացնելու hնաrավnrություն nւնենա յուrաfանչ-յուr անhաs եւ hայ hավաfականությունը՝ իr ամ-բողջության մեջ: Nr երիsասաrդը վսաhի իr երկ-րին, ապագա ու hեռանկաr sեսնի, nr sաrեցը hաrգանf ու անդոrr գsնի: Nr բաrեկեցիկ դառնա ամեն մի ընsանիf:

Միայն այդպես, միայն այդ ճանապաrhով մեՌf կկաrողանաՌf դիմակայել աrsաfին ճնշումներին եւ ազգային միանական ճակաs ձեւավnrել ու պաշsպանել մեr անկախ պեsության իՌfնուrույ-նությունը եւ մեr ժողովրդի իrավունfները:

Հիմնական լուծումներ են պեsf: Դաշնակցու-թյունը գնում է hիմնական լուծումների:

**- Շնոrhակալություն:**

# «...ԱՅՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՂԷՏԸ ՄԵԾ» ԿԱՄ՝ ԴԷՊՔԵՐԸ ԹՈՒՐՔԻՈՅ ԿՈՂՄԷՆ ԴԻՏՈՒԱԾ

Վաչէ Բրուտեան

Մօտաւորապէս եօթ տարի առաջ եւ գրեթէ այս օրերուն, Թուրքիոյ մէջ տեղի ունեցան խորհրդարանական ընտրութիւններ, որոնք ընթացիկ ըլլալու բոլոր տուեալները ունէին մինչեւ արդիւնքներու հրապարակումը:

Արդարեւ, 2002ի նոյեմբերին, Թուրքիոյ մէջ իշխանութեան գլուխ եկաւ Արդարութիւն եւ բարգաւաճում կոչուած իսլամամէտ կուսակցութիւն մը, գլխաւորութեամբ Ռեճէփ Թայիփ Էրտողան անունով քաղաքագէտի մը: Արեւմուտքի մէջ ապշանքն ու անորոշ ապագայի մը առթած վախերը իրարու խառնուեցան:

Երկու պատճառով: Առաջին, ՆԱԹՕի անդամ Թուրքիոյ գրեթէ բոլոր իրարայաջորդ կառավարութիւնները բաղկացած էին այնպիսի քաղաքական ուժերէ, որոնց ինքնութիւնը, գործելակերպը, քաղաքական ու գաղափարական ուղղութիւնները շատ յստակ էին Արեւմուտքին համար: Հիմա սակայն, այս ընտրութեամբ, իշխանութեան գլուխ եկած էին «նոր տղաներ», որոնց գործունէութեան կորագիծը շատ ալ յստակ չէր. կենսագրութիւն չկար: Հաւատացող ալ չկար, որ իսլամամէտ կուսակցութիւն մը կրնայ աշխարհիկ Թուրքիոյ օրինական արգելարշաւի բոլոր հանգրուանները յաղթահարել եւ առաջնութեան ոսկի մետալը շահիլ: Տակաւին շատ թարմ էր Նէճմէտտին Էրպաքանի օրինակը, որ ասկէ քանի մը տարի առաջ բանակին կողմէ սուսիկ-փուսիկ ճամբու դրուեցաւ՝ բամպակեայ պետական հարուածով մը: Երկրորդ, Սեպտեմբեր 11, 2001ի ոճրային արարքներէն անմիջապէս ետք, Արեւմուտքի, յատկապէս Մ. Նահանգներու քարոզչութիւնը շեշտուած կերպով հակաիսլամ նկարագիր մը ստացած էր: Հակաիսլամ տրամադրութիւն-

ներ համակած էին ամբողջ Արեւմուsfը: Եւ յանկարծ, այս մթնոլոrշին մէջ, ՆԱԹՕի անդամ երկրի մը մէջ իսլամական կուսակցութիւն մը իշխանութեան գլո՞ւխ... Խելքի մաrկելիf բան չէ:

NO PROBLEM!

Սակայն Էrsողան ու իր թիւ երկուfը, Աղsալլա Կիւլ, արագ ըմբռնած էին Արեւմուsfի թուլութիւնը: Անոնf դարձան եւ Թուrfիոյ աւանդական դաշնակիցներուն ըսին.- Գիsէ՞f ինչ, մենf ալ «fոսթիւմ-փողկապ» կը հագնինf, ֆէս կամ իսլամական sարազով չենf, մենf ալ «fաղաfակիrթ» ենf ձեզի նման: Եւ գիsէ՞f ինչ, մենf կ'ուզենf անդամակցիլ Եւrոպական միութեան: Այս անգամ աղsանfը այլ hարթութիւն փոխադրուեցաւ եւrոպական մայrաfաղաfներուն մէջ, իսկ Ուաշինկթընի մէջ, Պուշի վարչակազմը շեշsուած կերպով զօrակցեցաւ թrfական այս նոր ձգsումին եւ ջերմօrէն թելադrեց իր եւrոպացի դաշնակիցներուն, որղէսզի անդամակցութեան գործընթացը սկսին Թուrfիոյ համար:

Շուsով յսակացուեցան Թուrfիոյ համար fանի մը հիմնական նախապայմաններ: Այսինfն, ԵՄ-ին անդամակցելու համար, hարեւաններու hես hողային վէճեր պէsf չէ ունենալ, նաեւ փակ սահմաններ պէsf չէ ունենալ: Առաւել՝ բանակը ոչ մեծ դերակաsարութիւն պէsf է ունենայ fաղաfական կեանfին մէջ: Մնացեալը, խօսfի, մամլոյ կամ խղճի ազաsութիւն, ամուր ժողովրդավար կարգեր՝ իրենց կարգին կ'հյնային նախապայմաններու երկրորդ թղթածրարի մը մէջ:

Էrsողան եւ Կիւլ պաsասխանեցին՝ No problem, մենf կը լուծենf այս hարցերը: Այս անգամ աղsողները թrfական բանակի hրամանաsարութիւնն ու ուժային այլ կառոյցները եղան, որոնf Մուսթաֆա Քեմալի օrէrէն սկսեալ sիrական ու վերջին խօսfը ունեցած էին երկրի արsաfին ու ներfին fաղաfական վարfագծի ճշղումին մէջ, մինչեւ իսկ իրենց կամfին ընդդիմացողները զրկելով իշխանութենէ (Ճեմալ Կիւrսել եւ Քենան Էւrէն այս երեւոյթին ամենացայsուն օrինակներն էին):

«Փոfr» մանrամասնութիւն մը կար սակայն, որ Անգարայի մէջ լrջօrէն hաշուի առած չէին: Հայերը, Եւrոպայի մէջ, յաջողած էին hանrային կարծիf եւ մթնոլորs սsեղծել Թուrfիոյ դէմ, իրենց կողմէ առաջ մղելով այն գաղափարը, որ անհրաժեշs է Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը եւս ներառնել եւրոպական նախապայմաններու ցանկին մէջ:

Անգարայի վարչապեsարանի գրասենեակներուն մէջ, վսանգի կարմիր լոյսերը վառեցան ու ահազանգերը անգամ մը եւս hնչելու սկսան: Իrապէս, այս «մանrամասնութիւնը» Թուrfիոյ համար «սիrs խառնող» էr:

ՀԵՏԵՒԵԱԼ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ

Քարsէսին դիմաց կեցած, Էrsողան եւ Կիւլ hեsեւեալ hաշուարկումը կաsարեցին.- Հարաւի մեր դրացիներէն կայ Սուրիան: Հեsը լուրջ խնդիր չունինf Օջալանի չէզոfացումէն ասդին: Սուրիա ոչ ի վիճակի է եւ ոչ ալ sրամադիր՝ Ալեfսանsrէթ-Հաթայ նահանգի hարցը արծարծելու: Պուլկարիոյ hես եւս լուրջ hարցեր չկան: Յունաստանի hես, Եգէականի fանի մը կղզիներու խնդիրը կայ, որ երկու կողմերուն hամար աւելորդ sեղը մկան ցուցադրելու պաsրուակ է եւ ոչ մէկ ռազմագիտական խնդիր կամ վսանգ կը պարունակէ-դասաւորուելիf է: Կիպրո՞սը. մարսեցինfզնաց: Առաւել, ինչպէս շուsով երեւան եկաւ Աննանի ծրագրի ձախողութեամբ, Կիպրոսի յոյները իրե՛նf արդէն շաs sրամադիր չեն կղզիի վերամիացման հեռանկարով. իրենf իրենց sնտեսութիւնը եւ կեանfը դասաւորած են շաsոնց, Եւrոպի զօsիին մէջ միսի մնենէն շուsով (hեsազային մսան արդէն) եւ այլեւս ոչ սիrs, ոչ ալ սսամոfս ունին Թուrfիոյ hես չափուելու. վասն ինչի՞ միշի չափուին, եւ ի՞նչ շահելու hամար: Իrաfի hես սահմանը ապահով է, վսանգ չկայ այդ կողմերէն եւս, Սասսամը մշահոգ է միայն իր մորթը փrկելով: Յռեգոյն պարագային, fիւrsերուն դասն ալ կու sանf եթէ դարձեալ փոrձենf բան մը ընել:

Շուsով Էrsողան եւ Կիւլ անդրադարձան, որ վերոնշեալ բոլոր թղթածրարներու պարունակած hարցերը երկրորդական եւ լուծելի են: Ռազմագիտական վսանգներ չեն պարունակեr Թուrfիոյ hա-

մար: Սակայն կայ մէկ հիմնական խնդիր, եւ ՄԻԱՅՆ այդ խնդիրն է, որ իրենց համար վտանգաւոր է: «Վտանգաւոր», որովհետեւ կ'առնչուի Թուրքիոյ հողային ամբողջականութեան: Այդ ալ Հայկական հարցն է: Հայերը պահանջներ ունին Թուրքիայէն, Ցեղասպանութեան ճանաչումէն մինչեւ հատուցում, ներառեալ հողային հատուցում:

## ՆՈՐ ՎԱՐՔԱԳԻԾ

Շուտով երեւան եկաւ, որ Թուրքիոյ իսլամական իշխանութիւնը իր նախորդներէն բոլորովին տարբեր դիմագիծով կը ներկայանայ աշխարհին: Նախ կը փորձէ աւելի անկախ քաղաքականութիւն մշակել: Օրինակ, երբ Պուշ-Պլէր նախաձեռնեցին Իրաքի դէմ երկրորդ պատերազմը, Էրտողան կտրուկ կերպով մերժեց Ինճիրլիքի խարիսխը օգտագործելու անոնց պահանջը, այն հիմնաւորումով, որ Թուրքիա դէմ է տագնապները զէնքի ուժով լուծելու ընտրանքին: Այս անգամ ապշելու կարգը Ուաշինկթընինն էր:

ԵՄ-ի անդամակցութեան ծիրէն ներս, դանդաղ, սակայն հաստատուն քայլերով, Էրտողանի իշխանութիւնը սկսաւ բանակը հեռացնել քաղաքական կեանքէն, միաժամանակ տրամադրութիւն յայտնելով բանակցիլ եւրոպական այնպիսի նախապայմաններուն շուրջ (օրինական բարեկարգումներ եւայլն), որոնց շուրջ անկարելի էր որ իր նախորդները բանակցէին:

Հայկական ճակատին վրայ, թրքական իշխանութիւնները սկսան նախաձեռնութիւններ առնել: Մինչեւ իսկ յատուկ պատուիրակ Էճվետ Թեզճանը ուղարկուեցաւ Մ. Նահանգներ, տեսակցելու-բանակցելու համար տեղւոյն հայկական կազմակերպութիւններուն հետ: Էրտողան, այս ծրագրի յաջողութեան պարագային, կ'ուզէր ԵՄին ցոյց տալ, որ անտեղի է Ցեղասպանութեան ճանաչումը անդամակցութեան օրակարգին վրայ դնելը, որովհետեւ, ահաւասիկ, իրենք արդէն իսկ սկսեր են բանակցիլ Ամերիկայի հայերուն հետ: Այսինքն, ամէնէն «սոֆու»-ներուն, նոյնինքն անոնց հետ, որոնք առիթը չեն փախցներ Ցեղասպանութեան ճանաչման խնդիրը արծարծելու ամերիկեան ներքին քաղաքական կեանքի որեւէ հանգրուանին: Թեզճան սակայն ձեռնունայն վերադարձաւ, որովհետեւ հայութեան ազգային շահերը հաստատակամօրէն հետապնդող Հ.Յ.Դաշնակցութիւնը, Ամերիկայի իր կազմակերպութեամբ, չինկաւ այս ծուղակին մէջ:

Նաեւ, նոյն ճարպիկութենէն թելադրուած, Էրտողան նամակով մը առաջարկեց ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարեանին, որպէսզի երկու կողմերէն պատմաբաններու խառն յանձնախումբ մը կազմուի, որպէսզի ճշդէ 1915ի «դէպքերու» իսկական բնոյթը, ի հարկին երրորդ կողմի պատմաբաններու մասնակցութեամբ (հոս իրենք հարց չունին): Հոս եւս Էրտողանի խաղը քարին դպաւ: Որովհետեւ Քոչարեան իր պատասխանին մէջ առաջարկեց երկու կառավարութիւններու խառն յանձնախումբ մը կազմել Հայաստան-Թուրքիա հարցերը լուծելու նպատակով (այսինքն՝ պատմաբաններու յանձնախումբը քեզի պահէ, պարոն Էրտողան): Այս մէկը Էրտողանի ակնկալած պատասխանը չէր:

## ԷՐՏՈՂԱՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Թուրքիա լուրջ խնդրի դէմ յանդիման գտնուեցաւ մօտաւորապէս երկու տարի առաջ, երբ Մ. Նահանգներու Ներկայացուցիչներու տան Արտաքին յարաբերութեանց յանձնաժողովը քուէարկեց ի նպաստ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւին՝ հակառակ անձնապէս նախագահ Ճորճ Պուշի ընդդիմութեան: Ի զուր անցած էին նաեւ թրքական իրարայաջորդ պատուիրակութիւններու հանդիպումները Ուաշինկթընի մէջ:

Կացութիւնը աւելի ծանրացաւ Թուրքիոյ համար տարի մը առաջ, երբ Մ. Նահանգներու նախագահական ընտրութիւնները վերջ գտան յաղթանակովը այն թեկնածուին, որ բազմիցս կեցուածք ճշդած էր ի նպաստ Հայկական Ցեղասպանութեան ճանաչումին: Պարաք Օպամա:

Ի՞նչ պիտի ընէր հիմա Թուրքիա: Միակ մխիթարութիւնը Անգարայի համար, ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանի յայտարարած «ֆութպոլային դիւանագիտութիւն»ն էր, որ գէշ-աղէկ հունի մէջ մտած էր Օպամայի ընտրութենէն քիչ առաջ՝ Թուրքիոյ Նախագահ Ապտուլլա Կիւլի Երեւան հրաւիր-

ւելով եւ այցելութեամբ:

Բայց մենք ցեղասպանութիւն գործած ժողովուրդ չենք: Ահաւասիկ այս տրամաբանութեան վրայ յենելով էր, որ անցնող Յունուարին, Կազայի դէմ իսրայէլեան վայրագութենէն անմիջապէս ետք, Տաւոսի մէջ, Էրտողան հրապարակաւ բանավէճի բռնուեցաւ Իսրայէլի նախագահ Շիմոն Փերէսի հետ եւ Իսրայէլը ամբաստանեց Կազայի դէմ ցեղասպանութեան յանցանքով, այս ձեւով համաշխարհային ուշադրութիւնը իր վրայ հրաւիրելով:

Քանի մը օր ետք, Էրտողանին շեշտակի պատասխանեց Իսրայէլի ցամաքային ուժերու հրամանատարը, յիշեցում կատարելով Հայկական Ցեղասպանութեան:

Դժբախտաբար, սակայն, պաշտօնական Երեւանը ոչ մէկ ձեւով արձագանգեց Էրտողանի յայտարարութեանց, թոյլ տալով, որ Թուրքիա եւ Իսրայէլ շահագործեն Հայկական Ցեղասպանութիւնը՝ իւրաքանչիւրը ի նպաստ իր շահերուն:

Քանի մը ամիս ետք, Էրտողան նոյն ամբաստանութիւնները կրկնեց, այս անգամ Չինաստանի դէմ, ոյղուրներու հարցով: Ներքին տրամաբանութիւնը նոյնն էր. աշխարհին ցոյց տալ, որ ցեղասպանութիւններ դատապարտող Թուրքիան չի կրնար ցեղասպանութիւն գործած ըլլալ, հետեւաբար անհիմն են հայերու պնդումները այս ուղղութեամբ:

Օպամայի Թուրքիա այցելութիւնը, սակայն, գագաթնակէտին հասցուց թրքական մտավախութիւնները, մանաւանդ երբ ան թրքական խորհրդարանին մէջ Թուրքիոյ թելադրեց «ճակատէն նայիլ իր անցեալին» ու ապա մամլոյ ասուլիսի մը ընթացքին բեմադրուած հարցադրումի մը ի պատասխան յայտարարեց, թէ իր կեցուածքը չէ փոխուած Հայկական Ցեղասպանութեան ճանաչման հարցով:

Զարմացած չենք ըլլար, եթէ ըսենք, որ Անգարայի մէջ ծայր առած մտահոգութիւն տիրեց: Հոս էր, որ թրքական դիւանագիտութիւնը արագացուց Զուիցերիոյ մէջ Հայաստանի հետ իր գաղտնի բանակցութիւնները եւ յաջողեցաւ Ապրիլ 24ի նախօրեակին այսպէս կոչուած «ճամբու քարտէս»ի մը շուրջ Հայաստանէն համաձայնութիւն մը կորզել: Lottery շահելու պէս բան մը Թուրքիոյ համար:

Հիմա, այլեւս դժուար թէ Օպամա իր Ապրիլ 24 ուղերձին մէջ ցեղասպանութիւն որակէ 1915ի ջարդերը. չէ՞ որ զուիցերիական կնքահայրութեամբ Հայաստան եւ Թուրքիա իրենց հարցերը լուծելու պատրաստակամութիւն յայտնած եւ պաշտօնական յանձնառութիւն ստանձնած են:

## ՀԱՆԵԼՈՒԿԸ

Ճիշդ է, թէ այս ընդհանուր պատկերին մէջ կան բազմաթիւ ազդակներ եւս: Թուենք անոնց մէկ քանին.-

Առաջին.- Վրաստանը եւ Ուքրանիան չէզոքացնելու ռուսական քաղաքականութիւնը եւ առ այս՝ Հայաստանին համապատասխան թելադրանքը՝ ձեր գլխուն ճարին նայեցէք Թուրքիոյ հետ: Ասկէ՝ ֆութպոլային դիւանագիտութիւնը՝ հայկական ֆֆութպոլային եւ դիւանագիտական դարպաս մտած բազմաթիւ կոլերով:

Երկրորդ.- ՆԱՊՈՒՔՕ եւ Southern Stream կազատարներու ծրագիրները (առաջինը եւրոպական, երկրորդը՝ ռուսական), որոնք կը զօրացնեն Թուրքիոյ դիրքը եւ ընտրանք կու տան անոր՝ համապատասխան կողմերէն պահանջելով, որ Հայաստանը իրեն մատուցեն սկուտեղի վրայ: Այս պարագային ոչ Ռուսիա եւ ոչ ալ ԵՄը խնդիր ունին Թուրքիան Հայաստանով կաշառելու, կամ՝ Հայաստանը զոհելու ի նպաստ իրենց ծրագիրներուն:

Երրորդ.- Փրոթոգոլներով, ԵՄը եւ եւրոպական այլ երկիրներ պատմական ծանր պատասխանատուութենէ մը ձրիաբար կը ձերբազատուին: Հայկական հարցը այս ձեւով կը լուծուի՝ առանց հատուցումի, որ նաեւ իրենց պարտաւորութիւններէն է:

Աւելորդ է ըսելը, որ Թուրքիոյ համար երազային, կամ ալլահէն եկած պարգեւ կրնայ ըլլալ այն պահը, երբ փրոթոգոլները վաւերացուին:

Սակայն անլուծելի կը մնայ այն հարցը, թէ ընդհանուր պատկերին մէջ ինչքան ապիկարութիւն պէտք է դրսեւորած ըլլայ հայկական դիւանագիտութիւնը, որ Հայաստանն ու հայութիւնը այս ձեւով ափսէի վրայ կը յանձնէ Թուրքիոյ ողորմածութեան:

Վաւերացումէն ետք, այլեւս ուշ չըլլա՞ր Թումանեանի նման հարց տալը, թէ ուրկէ՞ եկաւ «այս ընդհանուր աղէտը մեծ»:

# Մի կողմ թող Դաշնակցության արխիվը, տե՛ս օսմանյանը

Այշե Հյուր



Գրող, պատմաբան ու լրագրող Այշե Հյուրը ծնվել է 1956 թ. Թուրքիայի Արդվին քաղաքում: Բալկանյան արմատներով հայրն ու ստամբուլցի մայրը եղել են ուսուցիչներ: Մանկության տարիներին ապրել է Ուրֆայում, Նազիլլիում ու Էդիրնեում, ապա՝ տեղափոխվել Ստամբուլ: 1992 թ. ավարտել է Ստամբուլի Բողազիչիի համալսարանի պատմության, միջազգային հարաբերությունների և քաղաքականության բաժինը: 2005 թ. նույն համալսարանի Աթաթուրքի անվան ինստիտուտում պաշտպանել է մագիստրական թեզ՝ «ԵՄ-ի՝ պատմության հետ հաշտվելու պայմանները և Հայկական հարցը» թեմայով: Ներկայում պատրաստում է դոկտորական աշխատանք վերոհիշյալ ինստիտուտում: Նրա պատմական ու քաղաքական հոդվածները տպագրվում են տարբեր թերթերում ու ամսագրերում, հիմնականում՝ «Ակօս»-ում, «Ռադիկալ»-ում, «Թոփլումսալ թարիհ-ում»: 2007 թ. նոյեմբերի 15-ից սկսած աշխատում է «Թարաֆ» շաբաթաթերթում: Հոդվածը թարգմանվել է «Թարաֆ» շաբաթաթերթի 25.05.2008-ի համարից:



Օսմանյան արխիվ, Անկարա

Անցած օրերին Թուրքական պատմական ընկերության նախագահ Յուսուֆ Հալաչօղլուն ասել էր. «Դաշնակցության արխիվը բացելու համար առաջարկեցի 20 միլիոն դոլարի չափով գումար: Դրանով շատ հանգիստ կարող են դասակարգվել արխիվային նյութերը, բայց ոչ ոք հետաքրքրություն չցուցաբերեց իմ առաջարկի նկատմամբ»: Մի կողմ թողնենք այս առաջարկի անվայել լինելու հանգամանքը և այն, թե կողմերի միջև նման խոսակցություն եղել է, թե ոչ (հոդվածը տպարան հանձնելուց հետո հերքում ստացվեց Դաշնակցության բոստոնյան արխիվի կողմից, ըստ որի՝ արխիվները բաց են, և որ իրենց ու Հալաչօղլուի միջև նման խոսակցություն չի եղել): Չգիտենք, թե ի՞նչ հույս ունի գտնել Հալաչօղլուն այդ արխիվներում, սակայն տարիներ ի վեր պաշտոնական տեսակետը արմատական կերպով հարցականի տակ դնող Թաներ Աքչամը պնդում է, թե անգամ օսմանյան արխիվներում դեռևս գոյություն ունեն բավականաչափ թվով ու որակով վավերագրեր, որոնք հերքում են «թուրքական պաշտոնական տեսակետը»: Ուստի Թաներ Աքչամն անցավ իր այս թեզը ապացուցելուն՝ 2008 թ. «Իլեթիշիմ» հրատարակչության տպագրած կարճ վերնագրով՝ «Հայկական հարցը լուծված է» գրքով:

## Պաշտոնական պատմագրություն

Այս գրքում ներկայացված են ներքևում մեր կողմից ամփոփ կերպով բերված արխիվների վերաբերյալ տեղեկություններ և քննադատություններ՝ ուղղված Յուսուֆ Հալաչօղլուի «Հայոց տեղահանությունը և ճշմարտությունները (1914-1918)» վերնագրով գրքում տեղ գտած որոշ պնդումներին: Հալաչօղլուն դեռևս որևէ մեկնաբանությամբ հանդես չի եկել Թաներ Աքչամի պնդումների և գրքի վերաբերյալ: Մինչդեռ, դյուրին չի թվում, որ հիմնականում օսմանյան արխիվների հիման վրա գրված այդ գրքի պնդումները Հալաչօղլուն հերքի այն փաստաթղթերով, որ երազում էր գտնել Դաշնակցության բոստոնյան արխիվում: Պաշտոնական տեսակետը պաշտ-

տանելու համար հանդես եկած Հալաչօղլուի այդ սենսացիոն հարձակումը, եթե անգամ նպատակ չունի մարդկանց ուշադրությունը շեղել Աքչամի գրքից, ապա նպատակադրված է, թեմայի վերաբերյալ մեկնաբանություններից խուսափելով, հիմարացնել սեփական հասարակությանը։ Լա՛վ, իսկ ո՞րն է իրականությունն այս հարցում։ Նախ խոսենք դրական դեպքերից։ Հայոց ցեղասպանության հարցով զբաղվող որևէ ուսումնասիրողի համար շատ կարևոր աղբյուր հանդիսացող Օսմանյան կառավարական արխիվը նախկինում հետազոտողների կողմից ազատ կերպով չէր կարող օգտագործվել այնպիսի տեխնիկական խնդրի պատճառով, ինչպիսին է քարտավորման գործողությունների անավարտ լինելը կամ էլ կառավարության կողմից տարվող քաղաքականությունը։ Մի ժամանակ արխիվում աշխատող գիտնականների հետ տեղի ունեցան այնպիսի անհաճո դեպքեր, ինչպիսիք են նրանց հարցաքննությունը, փաստաթղթեր չտրամադրելը և անգամ արխիվից դուրս շպրտելը։ (Որպես օրինակ տե՛ս Արա Սարաֆյանի «Օսմանյան արխիվների վերաբերյալ վեճը և Հայոց ցեղասպանությունը» գիրքը)։

Սակայն, ինչպես վերջին տարիներին, արխիվում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ։ Թե՛ ուսումնասիրողներին տրամադրվեցին նոր քարտարաններ և թե՛ վերջ տրվեց հետազոտողներին ուղղված վիրավորանքներին ու սպառնալիքներին։

### Գաղտնագրված փաստաթղթեր

Ինչ վերաբերում է Օսմանյան կառավարական արխիվի վավերագրերին, ապա հայոց ցեղասպանության հարցով զբաղվել ցանկացող յուրաքանչյուրի համար շատ կարևոր աղբյուր կարող են ծառայել Օսմանյան կառավարական արխիվում գտնվող Ներքին գործերի նախարարության ծածկագիր փաստաթղթերը։ Դրանք հիմնականում կենտրոնից դեպի գավառներ հղված կարճ հեռագրեր են։ Իսկ այդ հեռագրերին վիլայեթներից եկած պատասխանները մասամբ ցաքուցրիվ կերպով գտնվում են Անվտանգության գլխավոր տնօրինության առաջին, երկրորդ և երրորդ մասնաճյուղերի վավերագրերում։ Սակայն այսօր այդ փաստաթղթերի մեջ գրեթե չկան անմիջականորեն հայկական տարագրությանը վերաբերող նյութեր։ Անհայտ է, թե որտեղ են գտնվում այդ վավերագրերը։ Նորից նույն արխիվում գտնվող՝ Արտգործնախարարության և այլ գրասենյակների պատկանող փաստաթղթերից կատարվել է լայն ընտրություն, որը տեղադրվել է համացանցում։ http://www.devletarsivleri.gov.tr հասցեում գտնվող այդ վավերագրերի ընդհանուր թիվն անցնում է 1500-ից։ Սրանք, պաշտոնական տեսակետին աջակցելու նպատակով հատուկ կերպով ընտրված փաստաթղթեր լինելով հանդերձ, ցույց են տալիս վերջին տարիներին արխիվներում գրանցվող այն դրական զարգացումները, որոնց շնորհիվ արխիվային նյութերի բնագրերը տրամադրվում են համացանցից օգտվողներին։



### Օսմանյան խորհրդարանի արձանագրությունները

Մեկ այլ կարևոր աղբյուր են 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հայոց ցեղասպանության և սպանությունների հարցով լարված քննարկումների թատերաբեմի վերածված օսմանյան խորհրդարանի արձանագրությունները։ Դրանք հրապարակվել են Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից՝ փոխակերպումների ձևով։ Միևնույն ժամանակաշրջանին վերաբերող մեկ ուրիշ աղբյուր են հանդիսանում օսմանյան խորհրդարանի կողմից պատերազմական տարիներին կառավարության անդամների գործած հանցագործությունները հետաքննելու նպատակով ստեղծված Հինգերորդ հանձնախմբի արձանագրությունները, որոնք պահպանվել են Նեջմեթդին Սահիր (Սըլան) բեյի կողմից և 1334 (1919) թ. տպագրվել Ստամբուլի պատգամավորների պալատի տպարանի կողմից։ Գրքի վերահրատարակումն իրականացվել է Օսման Սելիմ Քոջահանօղլուի կողմից 1998 թ.՝ «Միություն և առաջադիմություն կուսակցության հարցաքննությունն ու դատավարությունը» (Ստամբուլ, «Թեմել» հրատարակչություն) գրքով։ Սակայն հայտնի չէ, թե որտեղ են գտնվում հայերի հանդեպ կա-

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

սարված տեղահանության և կոտորածների հեղինակներին հետապնդելու նպատակով կրկին օսմանյան խորհրդարանի կողմից 1918 թ. նոյեմբերի 24-ին հիմնըված «Հանցագործությունների հետաքննիչ հանձնաժողովի» փաստաթղթերը: Դրանք, բանի որ Ստամբուլը 1922 թ. վերջին անցել է Անկարայի կառավարության հսկողության տակ, դեռ ևս է որ Ստամբուլի Արտակարգ դրության հրամանատարության կողմից փոխադրված լինեին Անկարայի Գլխավոր շտաբի նախագահություն, սակայն մինչ օրս որևէ տեղեկություն կամ մեկնաբանություն չի տրվել այն մասին, թե վավերագրերը, արդյոք, գտնվում են Գլխավոր շտաբի ռազմական պատմության և ռազմավարության ուսումնասիրությունների ու վերահսկողության նախագահությունում:

«Թաքվիմ-ի վեքայի» («Իրադարձությունների օրացույց») դատավարությունները

Երրորդ խումբը կազմող կարևոր աղբյուր են տվյալ ժամանակաշրջանի պաշտոնական օրաթերթ «Թաքվիմ-ի վեքայի»-ի կողմից հրապարակված 1919-1921 թթ. Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանում քննված Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական ու տեղական ղեկավարների դեմ հարուցված դատական գործերին վերաբերող նյութերը: Այս օրաթերթն ընդհանուր թվով 63 դատական նիստերից հրապարակել է ընդամենը 12-ին վերաբերող որոշ փաստաթղթեր: Այս դատական գործերից շատ կարևոր են Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի և Հատուկ կազմակերպության պատասխանատուների դեմ հարուցված գործերը, ինչպես նաև Նախարարների խորհրդի անդամների դատավարությունը՝ թե՛ մեղադրական եզրակացության և թե՛ մեղադրյալների ցուցմունքների առումով: Նախ որպես առանձին դատական նիստեր սկսված, բայց հետագայում ընդհանուր դատավճռով ավարտված և 14 նիստից բաղկացած այս դատական գործընթացի նիստերի արձանագրությունները, երկու մեղադրական ակտերն ու ընդհանուր դատավճիռն ամբողջական կերպով հրապարակվել են «Թաքվիմ-ի վեքայի»-ի կողմից: Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղարների դատավարության՝ ընդհանուր թվով 13 նիստերից միայն առաջին երեքը և դատավճիռն է տպագրվել պաշտոնաթերթի կողմից: Իսկ մնացած 10 դատական գործից հրապարակվել են կա՛մ միայն դատավճիռները, ինչպես դա տեսնում ենք Յոզղաթի և Տրապիզոնի դատավարության դեպքում, կա՛մ էլ՝ միայն դատավճիռների վավերացումները սուլթանի կողմից, ինչպես եղել է Երզնկայի և Բաբերդի դատական նիստերի ժամանակ (սակայն մեջտեղում չկան պաշտոնաթերթում թե՛ հրապարակված և թե՛ չհրապարակված դատավարությունների փաստաթղթերի բնագրերը): «Թաքվիմ-ի վեքայի»-ի կողմից տպագրված այս նյութերի արձանագրությունները գրի են վերածվել Վահագն Տատրյանի և Թաներ Աքչամի կողմից:

Ստամբուլյան մամուլը

Կարևոր աղբյուրների չորրորդ խումբն է կազմում 1918-1922 թթ. ստամբուլյան մամուլը: Որքան էլ որ պաշտոնական պատմագրության մեջ որպես «Զինադադարի ժամանակաշրջանի մամուլ» ոչ քաղաքականացված թերթերի հանդեպ որևէ լուրջ կասկածի առիթ չառաջանա, այնուամենայնիվ, տվյալ ժամանակաշրջանը դույզն-ինչ ուսումնասիրողները կարող են տեսնել, որ Մուդրոսի զինադադարին հետևած տարիներին իթթիհատական և դաշնակցական ճնշումներից ազատագրված մամուլ օրգանները պարունակում են վերին աստիճանի մանրամասն տեղեկություններ՝ պատերազմի ժամանակ տեղի ունեցած դեպքերի և, հատկապես, հայերի դեմ ուղղված բռնաճնշումների վերաբերյալ: Ինչպես Ստամբուլի, Երզնկայի և Բաբերդի դատական գործերի դատավճիռները, այնպես էլ «Թաքվիմ-ի վեքայի»-ում տեղ չգտած բազմաթիվ փաստաթղթեր ու տեղահանությանն անմիջականորեն մասնակցած կամ ականատես եղած անձանց դատական ցուցմունքները և հուշերը տպագրվել են մամուլում: Օրինակ՝ Հալեպի նահանգապետ Ջելալ բեյի հուշերը հրատարակվել են «Վաքիթ» օրաթերթի 1918 թ. դեկտեմբերի 10-13-ի համարներում՝ երեք մասով, Երրորդ բանակի հրամանատար Վեհիբ փաշայի դատական ցուցմունքը ևս տպագրվել է «Վաքիթի» կողմից՝ 1919 թ. մարտի 31-ին: Իսկ տեղահանության ժամանակ պաշտոն ունեցած Չերքեզ Հասան Ամջա անվամբ պաշտոնյայի «Տեղահանության իրական դեմքը» վերնագրով հոդվածաշարն սկսել է տպագրվել «Ալեմդար» օրաթերթում 1919 թ. հունիսի 19-ին, սակայն հրապարակումն անավարտ է մնացել:

Երուսաղեմի արխիվը

Մեկ այլ կարևոր աղբյուր է Երուսաղեմի պատրիարքարանի արխիվը: Այս արխիվի առանձնահատկությունն այն է, որ այստեղ պահպանվում են վերոհիշյալ «Հանցագործությունների հետաքննիչ հանձնաժողովի» այսօր անհետացած որոշ փաստաթղթերի պատճենները: Այս պատճեններն այն տարիներին ռազմական արտակարգ ատյաններում աշխատող որոշ հայ պաշտոնյաների կողմից գաղտնի կերպով պատճենվել

են ձեռքով՝ դասական գործերից: Սակայն վերոնշյալ արխիվը բաց չէ ուսումնասիրողների առջև: Մի բան, որ շատ սխալ է:

## Դաշնակցության արխիվը

Իսկ Հալաչօղլուի 20 միլիոն դոլարանոց շոուի թեմա դարձած Դաշնակցության Բոստոնյան արխիվը, թուրքական տեսակետի համաձայն, փակ է, իսկ ըստ հայկականի՝ բաց: Իրական դրության մասին կարող են հայտնել միայն այս արխիվներում աշխատելու համար գործունեություն ծավալած ուսումնասիրողները: Եթե անգամ փակ է, ինչպես որ դա ասում էր Հալաչօղլուն, ապա այս արխիվը «սոցիալիստ ազգայնականության» ուղղությամբ գործունեություն ծավալած դաշնակցականների՝ այն օրերի քաղաքական քննարկումների վրա լույս սփռելու տեսանկյունից, հավանաբար, ուշագրավ տեղեկություններ է պարունակում, սակայն այս արխիվներից ձեռք բերվելիք ամենածայրահեղական հայտնագործությունները անգամ չարժեն Հալաչօղլուի 20 միլիոն դոլարին, քանի որ չեն կարող արդարացնել դաշնակցականների հետ ոչ մի առնչություն չունեցող հարյուր հազարավոր մարդկանց զոհաբերումը թուրքական ազգայնամոլությանը:

## Արամ Անտոնյանի փաստաթղթերը

Վավերագրերի մեկ այլ կարևոր խումբ է կազմում 1914 թ. զորահավաքի ժամանակ բանակում որպես նամակագրությունը և գրագրությունը ընթերցող պաշտոնյա ծառայած Արամ Անտոնյան անվամբ հայի՝ տեղահանությունից հետո ողջ մնացած հայ տղամարդկանց, կանանց և երեխաների վկայությունները ու Հալեպի տեղահանության կոմիտեի գլխավոր քարտուղար Նայիմ բեյ անունը կրող մի թուրք պաշտոնյայից ստացած բազմաթիվ փաստաթղթեր, հեռագրեր և որոշումը պարունակող հուշերից կազմված գիրքը, որը վերնագրված է հետևյալ կերպ՝ «Նայիմ բեյի հուշերը. թուրքական պաշտոնական փաստաթղթերը հայերի տեղահանության ու կոտորածների վերաբերյալ»: Քանի որ 1920 թ. հայերեն, 1965-ին էլ՝ ֆրանսերեն և անգլերեն տպագրված այս գրքում տեղ գտած վավերագրերի բնագրերը դեռևս չեն գտնվել, պատմաբանները հակված են անուշադրության մատնելու այս աղբյուրը: Այնինչ այս հուշերի գիրքն ու որոշ արխիվային փաստաթղթեր համընկնում են միմյանց հետ: Անշուշտ, կան նաև անգլիական, ամերիկյան, գերմանական, ֆրանսիական, ավստրիական ու ռուսական արխիվները, որոնք առանձին հոդվածի նյութ կարող են ծառայել, ինչպես նաև այն տարիներին օսմանյան երկրում գտնվող միսիոներների, լրագրողների, հետազոտողների, օգնության կազմակերպությունների անդամների և մի շարք այլ անձանց ժողոված փաստաթղթերն ու տեղեկությունները: Ավելին՝ գոյություն ունեն հազարավոր գրքեր, որոնք կազմվել են այս բոլոր աղբյուրների օգնությամբ: Անշուշտ, կարևոր է բոլոր փակ արխիվների բացումը, սակայն, մեղմ ասած, էթիկայից դուրս է հասարակայնության մեջ մթնոլորտ ձևավորելը, թե՝ «Եթե Դաշնակցության արխիվները չբացվեն, ճշմարտությունը չի բացահայտվի»:

## Ինչո՞ւ են անհետացել որոշ օսմանյան վավերագրեր

Երբ անդրադառնում ենք տեղական և արտասահմանյան արխիվային փաստաթղթերին, դատական արձանագրություններին, մամուլում հրապարակված տեղեկություններին, օրագրերին ու հուշերին, ապա պարզվում է, որ տեղահանության ընթացքում և հետագայում բազմաթիվ վավերագրեր են հափշտակվել կամ ոչնչացվել կասկածյալների կողմից: Նկատի ունեմ Հատուկ կազմակերպությանը պատկանող փաստաթղթերը: Երկրորդ խումբն են կազմում Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեին վերաբերող նյութերը: Ստամբուլում կատարված դատավարության տարբեր նիստերում ցուցմունքներ տված Միդհաթ Շյուքրյու Բլեդան, Քյուչյուք Թալեաթը և Զիա Գյոքալփը հայտնում են, որ այդ փաստաթղթերը տարել է երիտթուրքերի կենտրոնական կոմիտեի անդամ դոկտոր Նազըմը (տե՛ս «Թաքվիմ-ի վեքայի»-ի 3543 համարը, 8-ը մայիսի 1919 թ.):

## Լքյալ գույքի գրանցամատյանները

Անհետացած փաստաթղթերի երրորդ խումբն են կազմում Օսմանյան կայսրության Ներքին գործերի նախարարությանը պատկանող որոշ վավերագրեր: Օրինակ՝ ասպարեզում չկան Նախարարների խորհրդի 1915 թ. մայիսի 30-ի տեղեկագրերը և 1915 թ. հունիսի 10-ի հրահանգի հիման վրա հիմնված Լքյալ գույքի հանձնաժողովների գրանցամատյանները (սույն հանձնաժողովները կազմավորվել էին հայերի գույքին հետևելու նպատակով): Շևքեթ Սյուրեյա Այդեմիրն իր հուշերում նշում է, որ լսել է, թե Թալեաթ փաշան արտասահման փախչելուց առաջ «նախ մի ճամպրուկ թղթերով գնացել է Արնավուտքյոյի ափին մի ամառանոցում բնակվող իր ընկերներից մեկի մոտ: Այդ փաստաթղթերն այրվել են վիլլայի ներքևի


تقويم وقايع

«Թաքվիմ-ի վեքայի»

հարկում գտնվող վառարանի մեջ»: (Այդ մասին տե՛ս «Էնվեր փաշան Մակեդոնիայից մինչև Միջին Ասիա» գրքի երրորդ հատորը, 1914-1922, Ռեմզի տպագրատուն, 1978 թ., էջ 468):

### Հափշտակված զինվորական փաստաթղթերը

Փաստաթղթեր են գողացել ոչ միայն տեղական, այլև արտասահմանցի գործիչները: Պատերազմի ժամանակ օսմանյան գլխավոր շտաբի պետի պաշտոնում հանդես եկած Հանս Ֆ. Լ. ֆոն Սեքտը, Գերմանիա վերադառնալիս, իր հետ է տարել օսմանյան գլխավոր շտաբին վերաբերող կարևոր փաստաթղթեր: Սադրազամ (մեծ վեզիր) Իզզեթ փաշան 1918 թ. նոյեմբերի 6-ին գրած մի նամակով թե՛ իր բողոքն է արտահայտել այդ կապակցությամբ և թե՛ պահանջել է, որպեսզի փաստաթղթերի հետ միասին ետ վերադարձվեն նաև Թալեաթի, Էնվերի և Ջեմալի գլխավորությամբ Գերմանիա ճողոպրածները: Թեև Բեռլինը խոստացել է վերադարձնել փավերագրերը, բայց երբեք էլ չի կատարել իր խոստումը: Հանս Ֆ. Լ. ֆոն Սեքտը պատմում է, որ իր պաշտոնին գտնվելիս պարտադիր է եղել պաշտոնական հրամանների, զաղտնի որոշումների և անվավեր լինելը ցույց տվող նշանների հետևելը: (Տե՛ս V. N. Dadrian, Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources, Yay. Haz. Israel Charny, New Brunswick: Transaction Publishers, էջ 109-110):

### Էնվերի և Թալեաթի հեռագրերը

Յուզբաշի Սելահեդդինը իր հուշերում հաղորդում է, որ Էնվերն այնուհետև վերացրել է պաշտոնական աղբյուրներից գերմանացիներին սիրաշահելու համար ուղարկված իր հեռագրերը, ինչպես նաև՝ հետա-

գայում իր տանը տեղադրված «հեռագրատնից» ուղարկվածները: (Այդ մասին տե՛ս Իլհան Սելչուկի «Յուզբաշի Սելահեդդինի վեպը» գրքի առաջին հատորի 292-րդ էջը, Ռեմզի տպագրատուն, 1993 թ.):

Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ և արտաքին գործերի նախարար Հալիլ Մենթեշեի հուշերից տեղեկանում ենք, որ տեղահանության համար ղեկավար ուղեղ հանդիսացած և նախկինում հեռագրատանն աշխատած Թալեաթը հատուկ գիծ է անցկացրել դեպի իր տուն և իր նամակագրությունը կատարել է այստեղից: (Տե՛ս «Օսմանյան խորհրդարանի նախագահ Հալիլ Մենթեշեի հուշերը» գիրքը, կազմող՝ Իսմայիլ Արար, «Հյուրրիյեթ» հրատարակչություն, էջ 216):

**Այրված փաստաթղթերը**

Օսմանյան կառավարության արխիվի՝ Ներքին գործերի նախարարության արձանագրություններում նույնիսկ կան գրառումներ պետական պաշտոնական փաստաթղթերի վերաբերյալ, որոնց վրա նշված է «ընթերցելուց հետո այրելու» պահանջը: Այսպես, օրինակ, 1915 թ. հունիսի 22-ին, Թալեաթ փաշայի ստորագրությամբ, Անվտանգության գլխավոր տնօրինության կողմից որոշ վալիների և մյութասարիֆների՝ անուն առ անուն ուղղված ծածկագիր հեռագրերում տեղեկացվում է, թե ինչպես պետք է վերաբերվել աքսորվող քարավանների միջից դավանափոխ եղողների հետ, որից հետո նշվում է հետևյալը. «...և մեր այս հաղորդումն անհրաժեշտ անձամբ հատուկ կերպով հղվելուց և տվյալ հեռագրի պատճենը հեռագրատան միջոցով հասնելուց հետո ոչնչացնե՛լ»: (BOA/DH.ŞFR., nr. 54/100):

Մեկ այլ օրինակ է «Անձամբ» հատուկ գրությամբ 1915 թ. հունիսի 23-ին Մոսուլ ու Դեր Զոր հղված մի հեռագիր: Հայերի վերաբնակեցման խնդրի մասին որոշ վերին աստիճանի կարևոր հրահանգներ տվող հեռագիրն ավարտվում է հետևյալ ձևով. «Հաղորդվում է, որ տվյալ ծածկագիր հեռագիրը հասցեատերերին ներկայացվելուց հետո ոչնչացվի» (BOA/DH.ŞFR. nr., 54/41):

Փաստաթուղթ այրելու գործողությունը շարունակվել է նաև (Թուրքիայի) պարտությունից հետո՝ զինադադարի ժամանակաշրջանում: Թալեաթ փաշայի կառավարության՝ հրաժարական տալուց հետո, 1918 թ. հոկտեմբերի 14-ին, կառավարություն կազմած Ահմեդ Իզզեթ փաշան իր վրա է վերցրել նաև ռազմական նախարարի պարտականությունները: Եթե հայացք գցենք Հատուկ կազմակերպության վերջին ղեկավար Հյուսամեդդին Էրթյուրքի հուշերին, ապա կտեսնենք, որ վերոհիշյալ փաշայի առաջին գործն է եղել «Հատուկ կազմակերպության տնօրինության աշխատանքների անմիջապես դադարեցման և արխիվների վերացման մասին հրահանգը»:

**Ոչնչացում փոստում**

Վավերագրերի ոչնչացումը շարունակվել է, երբ պարզ է դարձել, որ պատերազմն ավարտվելու է պարտությամբ: Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանի կողմից իրականացված դատաքննության ժամանակ՝ 1914-1918 թթ. պաշտոնավարած Նախարարների խորհրդի անդամներին վերաբերող դատավարության 1919 թ. հունիսի 3-ի նիստում, կապի նախկին նախարար Հյուսեին Հաշիմը հայտնում է, որ այրվել են Ռազմական նախարարությանը պատկանող փաստաթղթերը: Որից հետո այս խնդրի հետ առնչություն ունեցած Չաքըլչայի փոստի և հեռագրության տնօրենի նախկին տեղակալ Օսման Նուրի էֆենդու դեմ հարուցվում է դատական գործ՝ փաստաթուղթ այրելու մեղադրանքով: Դատն սկսվում է 1919 թ. օգոստոսի 4-ին: Ամբաստանյալն իր ցուցմունքում ասում է, թե «Որոշ փաստաթղթեր այրել եմ տրված հրամանի հիման վրա: Պետերս, պատասխանատվությունն իրենց վրա վերցնելով, ասացին՝ այսինչ թվականից մինչև այնինչ թվականի փաստաթղթերն այրի՛ր, ես էլ այրեցի»: Տվյալ դատաքննության արդյունքը հայտնի չէ: (Այդ մասին տե՛ս «Ալեմդար» օրաթերթի 1919 թ. օգոստոսի 5-ի և 6-ի համարները):

Ռեֆիք Հալիդ Քարայը զինադադարի ժամանակաշրջանում եղել է Փոստի և հեռագրության գլխավոր տնօրենը: Երբ «Այդեդե» ամսագրում 1948 թ. հրատարակում է տվյալ ժամանակաշրջանի մասին իր հուշերը, բավականին երկար մի նամակ է ստանում Փոստի, հեռագրերի և հեռախոսի վարչությունում երկար տարիներ ծառայության մեջ եղած Հ. Սադըք Դուրաքան անվամբ մի պաշտոնյայից: Ռեֆիք Հալիդը հետագայում իր կազմած գրքում նույնությամբ հրատարակում է նաև այդ նամակը, ըստ որի՝ վերոհիշյալ պաշտոնյան պատմում է, թե որպեսզի կանխվի զինադադարի ժամանակ Փոստի, հեռագրերի և հեռախոսի վարչությունում պետական հաղորդակցությանը վերաբերող փաստաթղթերը թշնամու ձեռքն անցնելը, Մեհմեդ Էմին բեյի կողմից բոլոր կենտրոններին հրաման է հղվել, որ վերացվեն բոլոր առկա պաշտոնական փաստաթղթերը, հեռագրերի պատճենները ու բնագրերը: (Այդ մասին տե՛ս Մինելբաք Իլելմիհրաքի

«Զինադադարի շրջանի հուշերը» գիրքը, «Ինքըլաբ» տպագրատուն, 1992 թ., էջ 271-272):

**Փաստաթղթերի ոչնչացումներ՝ անհատների կողմից**

Կարևառուն իթթիհատական, կայմակամ, վալի լինելուց բացի, նաև Միություն և առաջադիմություն կուսակցության վերջին կառավարության մեջ հասարակական աշխատանքների նախարար եղած, Ադանայի տեղահանության դեպքերին մասնակցություն ցուցաբերած լինելու համար ձերբակալված ու Մալթա աքսորված Ալի Մյունիֆը հայտնում է, թե «Իթիլյաֆականների խարխումամբ ձերբակալվում և դաշի էին տրվում մի կողմից՝ պատերազմական հանցագործները, մյուս կողմից էլ՝ նշանավոր իթթիհատականները <...>: Ինձ հայտնեցին, որ տունս էլ են խուզարկելու: Թեև ես կարծում էի՝ որևէ կարևոր բան չեմ թողել, սակայն մեր տունը խուզարկվեց, և ես ձերբակալվեցի նամակագրությանը վերաբերող որոշ փաստաթղթերի պատճառով, որ գտել էին նրանց <...>: Ինձ ուղղված մեղադրանքը կայանում էր նրանում, որ ես հրահրել եմ հայոց տեղահանությունը <...>: Մի ճամպրուկի գրպանում <...> Ադանայից ներքին գործերի նախարարին իմ կողմից հղված հեռագրի սևագրություններն էին անցել նրանց ձեռքը <...>: Հիրավի, թեև ժամանակին ավելի կարևոր փաստաթղթերը ոչնչացրել էի, դա մոռացել էի ճամպրուկիս փոքր գրպանում <...>: Այդ փաստաթուղթը, որ մոռացել էի վերացնել, օգտագործվում էր իմ դեմ՝ որպես հանցանքիս ապացույց: (Տե՛ս Թահա Թորոս, «Ալի Մյունիֆ բեյի հուշերը», ԻՍԻՍ հրատարակչություն, 1996 թ., էջ 96-97):

Ազգային ազատագրական պայքարի տարիներին արդարադատության նախարար աշխատած Ահմեդ Ռըֆաթ Չալըքան հետևյալն է նշում իր հուշերում. «Դատախազը ինձ հաղորդեց, որ մի օր վիլայեթ է հասել մի ծածկագիր հեռագիր, մի խառը հանձնաժողով Կայսերի (Կեսարիա) գալով՝ քննելու է տեղահանության գործը, և որ կասկածյալների դեմ իրականացվելու է հետաքննություն ու դատական հետապնդում, նրանց տներն էլ խուզարկվելու են...: Դասընկերոջս հետ միասին տուն եկանք. ես այրեցի փաստաթղթերս ու հուշերս»: (Ահմեդ Ռըֆաթ Չալիքայի հուշերը, Հուրշիդ Չալիքայի անձնական տպագրատուն, 1992 թ., էջ 7, 15-16):

**Անգլիական արխիվից**

1919 թ. հունվարի 24-ին անգլիացիների ձեռքն է ընկնում մի հեռագիր, որը Ներքին գործերի նախարարությունը հղել էր Անթեպի (Այնթապի) վիլայեթին: Հեռագրով պահանջվում է վերացնել զորահավաքից ի վեր տվյալ շրջան ուղարկված պաշտոնական հեռագրերի բնագիր օրինակները (FO371/4174/15450: folio 182):

1919 թ. հունիսի 17-ին, երբ տվյալ ժամանակաշրջանի արտգործնախարար Սաֆա բեյն այդ առթիվ իր դժգոհությունն է արտահայտում անգլիական Գերագույն կոմիսարությանը, այնուամենայնիվ ընդունում է, որ Դիարբեքիրի Հեռագրության վարչությունը կազաներին (գավառներին) ու նահիեներին (գյուղախմբերին) մի շրջաբերական է ուղարկել՝ 1914-1918 թթ. ստացված փաստաթղթերի բնագրերը վերացնելու հրահանգով (FO371/4174/15450: folio 182):

Հիմա Յուսուֆ Հալաչօղլուին դիմենք հետևյալ հարցով. «Արդյոք ինչո՞ւ էին գրված այդ փաստաթղթերում, որ այդքան անհրաժեշտ էր դրանց ոչնչացումը»:

**Թաներ Աքչամի՝ Յուսուֆ Հալաչօղլուին ուղղված քննադատությունները**

Խնդիրը միայն վավերագրերի բացակայությունը չէ: Հարցեր են առաջանում նաև առկա փաստաթղթերը ազնիվ կերպով օգտագործելու առումով: Այս առումով որպես օրինակ կարող են ծառայել թուրքական պաշտոնական տեսակետը պաշտպանելու նպատակով արվող այն պնդումները, թե տարագրված հայերի սեփականության արժեքները Լքյալ գույքի հանձնաժողովների կողմից ուղարկվել են իրենց տերերին: Այս պնդումը կրկնվում է նաև Յուսուֆ Հալաչօղլուի կողմից իր «Հայոց տեղահանությունը և ճշմարտությունները (1914-1918)» գրքում (էջ 69): Թաներ Աքչամն իր վերջին գրքում հետևյալն է ասում. «Թուրքական պաշտոնական տեսակետը պաշտպանելու նպատակով գրված մի աշխատության մեջ առաջ է քաշվում այն տեսակետը, թե «վաճառված սեփականությունների գներն ուղարկվել են իրենց տերերին՝ Լքյալ գույքի հանձնաժողովների կողմից: Հետևապես՝ աքսորի վայրերը հասած զաղթականներն իրեն թե այդ գումարներով իրենց գործն են հիմնել և հարմարվել նոր բնակավայրերին» (Տե՛ս Յուսուֆ Հալաչօղլուի «Հայոց տեղահանությունը և ճշմարտությունները (1914-1918)» գրքի 69-րդ էջը): <...> Սույն տեսակետն առաջ քաշած անձը 1989-1992 թթ. եղել է Կառավարության Օսմանյան պետական արխիվների գլխավոր տնօրենը, իսկ 1993 թվականից ի վեր հանդիսանում է Թուրքական պատմական ընկերության նախագահը: Հեղինակը, որպես իր պնդման ապացույց, բերում է 3 օսմանյան փաստաթուղթ: Ուշագրավն այն է, որ որպես փաստարկ ներկայացվող այս հեռագրերից և ոչ մեկի բովանդակությունը չի

պարզաբանվում, և որ տվյալ փաստաթղթերից ոչ մի հղում չի արվել: Ըստ էության, եթե հղում արվեր, ապա կլիներ հետևյալ պատկերը. այս երեք հեռագրերն էլ վերաբերում են միևնույն դեպքին և հղվել են միևնույն օրը երեք տարբեր վայրերի հասցեատերերին: Ավելին՝ տվյալ փաստաթղթերը որևէ կապ չունեն հայերի կողմից լքված գույքերի վաճառքից ստացված եկամուտը նրանց վերադարձնելու խնդրի հետ: <...> Ինչպես տեսնում ենք, հեռագրերը վերաբերում են միայն Էսքիշեհիրից հայերի ապրանքների վաճառքից ստացված գումարը Հալեպ ուղարկվելուն, որպեսզի փակվեն տեղահանության ժամանակ կառավարության արած ծախսերը: Այն հանգամանքը, որ Օսմանյան արխիվների գլխավոր տնօրենը եղած, ուզած րոպեին արխիվում գտնվող ամեն մի արձանագրության և ամեն մի վավերագրի հասու լինելու հնարավորությունն ունեցած մեկը չի կարողացել գեթ մեկ փաստաթուղթ գտնել առ այն, թե հայերը տարագրված վայրերում ստացել են իրենց թողած գույքերի փոխհատուցումը, ինչպես նաև՝ այն, որ տվյալ անձն անգամ դիտավորյալ կերպով խեղաթյուրելով է օգտագործում որոշ նյութեր, որոնք ոչ մի առնչություն չունեն տվյալ խնդրի հետ, արդեն իսկ բավարար է՝ որոշ բաներ բացատրելու առումով»:



**1397 հոգու մասին սուտը**

Թաներ Աքչամն իր վերոնշյալ գրքում հարցականի տակ է դնում նաև այն փաստարկը, որ շատ հաճախ է օգտագործվում, որպեսզի հաստատվի, թե տեղահանության նպատակը չի եղել հայերի բնաջնջումը: Ըստ այդ պնդման, որն առաջին անգամ արտահայտվել է Քամուրան Գյուրյունի «Հայկական թղթապանակ» գրքում (էջ 88), որից հետո կրկնվել նաև Յուսուֆ Հալաչօղլուի «Հայոց տեղահանությունը և ճշմարտությունները (1914-1918)» աշխատության մեջ՝ «Տեղահանության ժամանակ որոշ պաշտոնյաներ թույլ են տվել չարաշահումներ, բայց հիմնվել է մի հատուկ հետաքննող հանձնաժողով, և մեղավորները հանձնվել են արտակարգ դրության դատարաններին: Հետաքննություն է սկսվել 1397 հոգու դեմ, որոնց մեծ մասը ենթարկվել է տարբեր պատիժների, այդ թվում՝ մահապատժի»:

Հիմա կրկին ընթերցենք Թաներ Աքչամին. «Երբ առանձին-առանձին անդրադառնում ենք այն 12 փաստաթղթերին, որ բերել է Հալաչօղլուն՝ որպես ապացույց «ծանր պատիժների ենթարկվելու» մասին, ապա տեսնում ենք, որ տվյալ վավերագրերից և ոչ մեկը որևէ կապ չունի հայերի դեմ հանցանք կատարած պաշտոնյաների դատավարության ու պատժվելու հետ: Տվյալ նյութերն առնչվում են միայն այնպիսի հանցագործությունների, ինչպիսիք են հայերի թողած գույքը կողոպտելը, առևանգելը, կաշառելը և պարտագրելը, և դրանց մեծ մասն էլ արդեն իսկ որևէ կապ չունեն դատավարության հետ <...>: Հալաչօղլուն, որը վերոհիշյալ փաստաթղթերը ներկայացնում է որպես «ռազմական ատյանում կատարված դատաքննության» ու «ծանր պատիժներ ստանալու» օրինակներ, չի բավարարվում այդչափ խեղաթյուրումներով և չի քաշվում անգամ իր տեսակետին որպես ապացույց բերել նաև հայերի դեմ հանցանք գործելու պատճառով գովեստի արժանացած պետական պաշտոնյաների մասին նյութեր: Օրինակ՝ փաստաթղթերից մեկն այն մասին է, թե Ջեմալ փաշայի կողմից պաշտոնազրկված մի կայմակամ (գավառապետ) արժանացել է Թալեաթ փաշայի գովաբանությանը և վերադարձվել իր պաշտոնին: <...>

Այն, որ այս փաստաթուղթը ներկայացվում է որպես հայերի դեմ հանցանք գործած պետական պաշտոնյաների՝ տարբեր պատիժների ենթարկված լինելու օրինակ՝ ընդհուպ մինչև մահապատիժ, պետք է ընկալվի որպես ամոթ, ավելին, հանցանք՝ կատարված գիտնականի կողմից»:

*Թուրքերենից թարգմանեց Մելինե Անումյանը*



# Հրեա զինվորի դերը հրեությունում

Կարեն Վերանյան

### Հրեա զինվորականի արժեհամակարգի ձևավորման գործընթացը

Հրեության շրջանում հրեա զինվորականի կերպարը մշտապես ընկալվել է որպես հրեական պետականության շարունակականության, հրեա ժողովրդի ու նրա ժառանգության պաշտպանության առաջնակարգ երաշխիքներից մեկը: Հատկապես պետականության բացակայության ժամանակաշրջանում էապես կարևորվել է հրեա զինվորականի բարոյահոգևոր բարձր պատրաստվածության հարցը՝ որպես ազգային ինքնության պահպանման կարևորագույն բաղադրիչի: Արդյունքում հրեության պատմության հաղթանակներն ու հերոսապատումները դարձել են այն կարևորագույն արժեհամակարգային սկզբունքները, որոնք և հետագայում հիմք հանդիսացան հրեա զինվորի վարքականոնի ստեղծման համար: Հրեա զինվորականի վարքականոնի շուրջ ձևավորված ավանդական մոտեցումներն իրենց կիրառական գործածությունը ստացան առաջին աշխարհամարտի տարիներին, երբ դրվեցին հրեական պետականության առաջին հիմքերը: Առանձնակի պետք է ներկայացնել Իոսիֆ Տրումպելդորի կերպարը, որը զգալի ավանդ ունեցավ վարքականոնի նորմերի ձևավորման գործում: Հրեության շրջանում հերոսացված Տրումպելդորը հստակ էր գիտակցում ժամանակաշրջանի միջազգային և մերձավորարևելյան բարդ իրադրությունում հրեական պետականության ստեղծման հարցում հրեա զինվորի՝ որպես խիզախ, բարոյահոգևոր բարձր արժեքներ կրող մարտիկի անգնահատելի կարևորությունը: Տրումպելդորը մեծ տեղ էր հատկացնում «ժողովրդի բանակի» գաղափարին, որի զինվորականներն իրենց

ետևից կտանեին հրեա ժողովրդին, կպաշտպանեին վերջինիս ու իրենց պետականությունը՝ չխնայելով սեփական կյանքը: Տրումպելդորը հրեա զինվորականի վարքականոնի հիմքում տեսնում էր «ասպետական պատասխանատվության» բարոյական նորմը:

Հրեա զինվորականի վարքականոնի տրումպելդորյան մոտեցումը աջակցություն ստացավ հրեական պետական հիմնադիր այրերի կողմից (առաջին հերթին՝ երկրի առաջին վարչապետ Դավիթ Բեն-Գուրիոնի): Նրանց բարոյական պատկերացումները կենտրոնանում էին պետականակենտրոն գաղափարախոսության վրա, ըստ որի հրեա զինվորի արժեքային համակարգի հիմքում դրվում էր ոչ այնքան ասպետական պատասխանատվության, որքան հրեական պետությանը անվերապահ ծառայելու ու հավատարիմ լինելու զգացումը՝ որպես «բարձրագույն առաքելություն»:

20-րդ դարի սկզբին հրեական ազգային-ազատագրական պայքարի շրջանում, ինչպես նաև 1948թ. Իսրայել պետության հիմնադրմանը հաջորդած 4 տասնամյակներին հրեության տարբեր հատվածներում նոր ձևակերպումներ առաջարկվեցին վարքականոնին, որտեղ ակնհայտ էր սիոնիստական գաղափարախոսության և հատկապես հուդայականության կրոնաբարոյական գործոնի ազդեցությունը: Ավելին, յուրաքանչյուր հրեայի բարոյական, սոցիալ-կենցաղային կերտվածքում գերակշռում է հենց կրոնաբարոյականության ազդեցությունը, որը և մեծապես պայմանավորում է նրա ազգային ինքնագիտակցությունը:



Իոսիֆ Տրումպելդոր

## Հրեա զինվորականի վարքականոնը

Հրեության շրջանում հրեա զինվորի դերը նորովի կարևորվեց Իսրայել պետության հիմնադրման տարիներին ու վերջին տասնամյակներում՝ պայմանավորված արաբա-իսրայելական հաճախակի պատերազմներով, ինչը հետևաբար նպաստեց վարքականոնի հայեցակարգի ի մի բերման գործընթացին: Հայեցակարգն ամփոփ բնույթ ստացավ 1992թ., երբ Իսրայելի պաշտպանության ուժերը ներկայացրեցին «Իսրայելի պաշտպանության ուժերի վարքականոնը» (The IDF Code of Conduct): Փաստաթուղթը կարճ ժամանակահատվածում ստացավ միջազգային լայն հնչեղություն: Վերջին շրջանում ԱՄՆ-ի Պենտագոնը, միջազգային ահաբեկչության դեմ պայքարում, դիմել է զինվորի վարքականոնի հրեական փորձի օգնությանը: Իսրայել պետության կողմից վարքականոնին տրված բարձրագույն կարևորության մասին է խոսում այն հանգամանքը, որ վերջինս հանդիսանում է Իսրայելի պաշտպանության ուժերի դոկտրինի երկու գլխավոր բաժիններից մեկը՝ «էթիկա» խորագրով: Փաստաթղթի համաձայն, «Իսրայելի պաշտպանության ուժերի նպատակն է Իսրայելի պետության ու նրա անկախության գոյության պաշտպանությունը, Իսրայելում բնականոն կյանքի խաթարմանն ուղղված բոլոր թշնամական ջանքերի չեզոքացումը: Իսրայելի պաշտպանության զինվորները պարտավոր են մարտնչել, անվերապահորեն ներդնել իրենց ողջ ունակությունները և նույնիսկ զոհաբերել իրենց կյանքը հանուն Իսրայելի պետության, նրա քաղաքացիների պաշտպանության»:

Վարքականոնի արժեքներն են՝

1. նպատակային կամք՝ առաքելության կատարման ու հաղթանակին հասնելու համար,



Իոսիֆ Տրումպելդորի հիշատակին

2. պատասխանատվության զգացում՝ Իսրայել պետության, նրա բնակիչների պաշտպանության գործում,
3. զինվորականի կողմից վստահության զգացում,
4. անձնական օրինակի մատուցում (հրեա մարտիկը պետք է կատարի իր պարտականությունները այնպես, ինչպես ինքն է պահանջում գործընկերներից),
5. մարդկային կյանք (մարտական գործողություններում հրեա զինվորականը պետք է վտանգի իր և իր գործընկերների կյանքը միայն այն չափով, որչափ պահանջվում է իրենց վրա դրված առաքելության կատարման համար),
6. զենքի նպատակային գործադրում (զենքի կիրառում միայն առաջադրված առաքելության կատարման նպատակով),
7. պրոֆեսիոնալիզմ,
8. կարգապահություն,
9. եղբայրություն կամ թիմային ոգի/Esprit de corps,
10. առաքելության գիտակցում:

Իսրայելի պաշտպանության ուժերի հայեցակարգի մյուս՝ «Հիմնական հայեցակարգ» մասնաբաժնում նույնպես առանձնահատուկ շեշտվում են հրեա զինվորականության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնահարցերը՝ որպես Իսրայելի պետության, նրա բնակիչների պաշտպանության հիմնարար երաշխիք: «Հիմնական հայեցակարգում» ներառված հիմնադրույթների շարքում տիպիկ օրինակ է առաջին կետը, ըստ որի «Իսրայելը չի կարող պարտություն կրել անգամ մեկ պատերազմում»:

### Հրեա ռազմագերիների խնդիրը

Հրեության շրջանում յուրաքանչյուր հրեա զինվորի բարձր արժևորման հանգամանքը հաստատվում է նաև հրեա ռազմագերիների ազատ արձակման հարցերի լուսաբանման առումով, ինչը առանցքային տեղ է զբաղեցնում հուդայականությունում: Հրեա ռազմագերիների ազատագրումն ասոցիացվում է «Գեուլա» կամ «Ազատագրում» կոչվող բարեգթության ամենօրյա աղոթքի հետ, որտեղ հրեաներն իրենց շնորհակալությունն են հայտնում Աստծուն՝ Մովսեսի առաջնորդությամբ Եգիպտոսից հրեաներին ստրկությունից ազատագրելու համար: Աստված հրեա ժողովրդին ներկայանում է ոչ թե երկնքի ու երկրի արարիչ, այլ որպես ազատագրիչ: Եգիպտոսից հրեաներին ստրկացումից ազատման հիմնահարցը նշանակալի տեղ ունի նաև հրեության ազգային ինքնության համատեքստում: Այստեղից էլ հրեա ռազմագերիների խնդիրը կապվում է հենց եգիպտոսյան գերեվարումից հրեա ժողովրդի ազատագրման հետ: «Միշնե Թորա»-ի 7-րդ՝ «Աղքատներին բարեգործություն անելու մասին» օրենքում ասվում է. «Գերիների ազատագրումը նախորդում է աղքատների կերակրմանն ու հագ տանելուն, և գոյություն չունի մեկ այլ առավել կարևոր պատվիրան, քան գերիների ազատումը, քանզի գերին և՛ քաղցած է, և՛ պապակ, և՛ մերկ, և իր կյանքը մշտապես վտանգի տակ է գտնվում: Նա, ով աչք է փակում գերիների ազատման վրա ու խուսափում դրանից, դրանով իսկ խախտում է Թորայի մեկնություններից ու գրություններից շատերը»:

Հրեական կրոնական ավանդույթում հրեա ռազմագերու ամեն գնով ազատման սկզբունքը դարերի ընթացքում անհրաժեշտություն առաջացրեց կրոնաիրավական այլ մեկնությունների: Խնդիրն այն է, որ ցանկացած փրկագնով ազատման գործում հրեության պատրաստակամությունը բերեց թշնամիների կողմից հրեաների առևանգման դեպքերի հաճախացմանն ու նոր պահանջների առաջադրմանը: Անհրաժեշտություն առաջացավ որոշ սահմանափակումներ մտցնել փրկագնի վճարման հարցում, որտեղ առաջ եկավ «գերիներին ա-




Պաղեստինցիների և հրեաների բնակվածության քարտեզ Իսրայելում

զատագրում են իրենց (գերիների) ունեցած գնի սահմաններում և ոչ ավելին» սկզբունքը: Սակայն, միջնադարյան ժամանակաշրջանից սկսած, այդ մոտեցման ջատագովները աստիճանաբար տեղի տվեցին, և կրկին առաջ մղվեց «գերեվարված հրեաներին ցանկացած գնով ազատագրելու» սկզբունքը, ըստ որի հրեա ռազմագերու ազատումը դիտվեց հրեական համայնքների անվտանգության ապահովման կարևորագույն նախապայման: Այս միտումը դարերի ընթացքում այնքան արմատացավ հրեական կրոնաիրավական նորմերում, որ քայլեր ձեռնարկվեցին «ցանկացած գնով և նույնիսկ ավելին» սկզբունքի առաջմղման հարցում:

Հուդայական մեկնություններում եգիպտական գերության ժամանակաշրջանը կարևորվում է նաև նրանով, որ հրեա ժողովրդի համար էլ ավելի արժևորվեց անհատի ու իր մերձավորի ազատության գաղափարը: Այստեղից էլ բխում է հուդայական այն սկզբունքը, ըստ որի հրեա ժողովրդի «ազատագրումը» հաջողված է յուրաքանչյուր հրեայի կողմից մերձավորի ազատության բարձր արժևորման գիտակցումից ելնելով, և քանի դեռ գոնե մեկ հրեա կգտնվի գերության մեջ, հրեական համայնքի ու նրա անդամների անվտանգությունը կլինի սպառնալիքի ներքո: Ավելին, ռազմագերիների ազատագրման մասին կրոնական օրենքը համարվում է թվով քիչ այն իրավական նորմերից, որոնք վերաբերում են կյանքի ու մահվան խնդիրներին:

Հրեա ռազմագերիների ամեն գնով ազատման գաղափարը շարունակում է մնալ հրեության ազգային ինքնության անքակտելի մասը նաև Իսրայել պետության հիմնադրման փուլում: 20-րդ դարի սկզբներին հրեական պետականության հիմնադրըման տարիներին և 1948թ. Իսրայելի ստեղծումից հետո, երբ էլ ավելի արժևորվեց հրեա զինվորականության



դերը հրեության ու Իսրայել պետության անվտանգության ապահովման հարցում, յուրաքանչյուր հրեա ռազմագերու ցանկացած գնով հայրենիք վերադարձնելու հարցը դարձավ խիստ սկզբունքային: Փաստերը բավական տպավորիչ են: Այսպես, Իսրայել պետության անկախության համար մղված պատերազմից հետո, երկրի ղեկավարությունը արաբական երկրների հետ իրականացրեց գերիների փոխանակում, որի արդյունքում ազատ արձակվեցին 6306 արաբներ՝ 885 հրեա ռազմագերիների դիմաց: Առավել խոսուն է 1956թ. Սինայի կամպանիայից հետո ռազմագերիների փոխանակման վիճակագրությունը, որի արդյունքում Իսրայելն ընդամենը 4 հրեա ռազմագերիների ազատ արձակման դիմաց Եգիպտոսին հանձնեց շուրջ 5500 ռազմագերիների: 1982թ. սեպտեմբերին լիբանանյան առաջին պատերազմի արդյունքում ստորագրվեց «Ջիբրիլի առաջին գործարքը» (Ահմադ Ջիբրիլ՝ «Պաղեստինի ազատագրման ժողովրդական ճակատ» ահաբեկչական խմբավորման առաջնորդ)՝ հրեա ութ ռազմագերիների ազատման համար: 1983թ. նոյեմբերին ազատ արձակվեցին նրանցից միայն վեցը, որի դիմաց իսրայելական կողմը հանձնեց 4700 ահաբեկիչների և Իսրայելի բանտերում գտնվող ևս 65 ռազմագերիների: Իսկ 1985թ. մայիսի 21-ին իրականացվեց «Ջիբրիլի երկրորդ գործարքը», որով ազատ արձակվեցին 1150 դատապարտված ահաբեկիչներ՝ երեք հրեա ռազմագերիների ազատագրման դիմաց (երկուսը վերը նշված երկու ռազմագերիներն էին): 2004թ. Իսրայելը ազատ արձակեց 450 ահաբեկիչ ռազմագերիների, որոնց դիմաց հայրենիք վերադարձվեցին երեք հրեա ռազմագերիների դիակները:

Ներկայում իսրայելական կողմը բանակցություններ է վարում «Համասի» հետ 2006թ. հունիսի 25-ին գերեվարված հրեա զինվորական Գիլադ Շալիթի ազատման հարցի շուրջ: Գերեվարումից երկու օր անց՝ հունիսի 28-ին, Իսրայելը նախաձեռնեց «Ամառային անձրևներ» կամ Գիլադ Շալիթի ազատագրման ռազմական օպերացիան: Արդյունքում իսրայելական կողմը կարողա-



Ահմադ Ջիբրիլ

ցավ ձերբակալել «Համասի» 64 անդամների, այդ թվում և Պաղեստինի ազգային վարչության (ՊԱՎ) 8 նախարարների: Իսկ 2009թ. հոկտեմբերի 2-ին Գ. Շալիթին նկարահանող երկու րոպեանոց տեսաժապավենի ձեռք բերման դիմաց իսրայելական կողմն ազատ արձակեց 20 պաղեստինցի գերեվարված կանանց:

2006թ. հուլիսի 12-ին սկսված լիբանանյան երկրորդ պատերազմի հետևանքով «Հեզբոլլահ» խմբավորումը գերեվարեց երկու իսրայելցի զինծառայողների (Էհուդ Գոլդվասսեր և Էլդադ Ռեգև), որոնց դիակների վերադարձման դիմաց պահանջվում էր Իսրայելի բանտերից ազատ արձակել 1000 պաղեստինցիների: 2008թ. հուլիսի 16-ին՝ գերեվարումից երկու տարի անց, հրեա զինվորների դիակները վերադարձվեցին Իսրայել, որի դիմաց իսրայելական կողմը ազատ արձակեց լիբանանցի հայտնի ահաբեկիչ Սամիր Կունտարին (1979թ. դատապարտվել էր քառակի ցմահ բանտարկության հրեա ընտանիքի սպանության մեղադրանքով): Իսրայելը պարտավորվածություն վերցրեց իր վրա «Հեզբոլլահին» հանձնել պաղեստինցի ու լիբանանցի գրոհայինների շուրջ 200 դի: Է. Գոլդվասսերի և Է. Ռեգևի մարմինների մասերի ինքնությունը հաստատելու նպատակով իսրայելական կողմն անցկացրեց ԴՆԹ-ի փորձաքննություն, որը հաստատեց դիակների պատկանելիությունը: Ի դեպ, մինչև իսրայելական կողմի ԴՆԹ-ի փորձաքննության անցկացումը, նման հետազոտություն իրականացրել էր ՄԱԿ-ը, սակայն իսրայելական կողմը որոշ կասկածներ ուներ այդ փորձաքննության արդյունքների վերաբերյալ:

### Ազգակերտում՝ հերոսապատումներով. Մասադայի ինքնապաշտպանությունը

Հրեա զինվորականության բարոյահոգևոր դաստիարակության հարցը կենտրոնական նշանակություն ունի նաև հրեա ժողովրդի ազգապահպանության, ազգակերտման տեսանկյունից: Իսրայել պետության համար անգնահատելի է հրեա ազգի հերոսապատումների շուրջ ազգային կոլեկտիվ հիշողության վերականգնումը: Ռազմական հաղթանակների թեմատիկայի հասարակայնացումն ու սոցիալականացումը էլ ավելի արդիական դարձավ Իսրայել պետության հիմնադրումից հետո, երբ նորովի վերաիմաստավորվեցին ինչպես անցյալի ձեռքբերումները, այնպես էլ պարտությունները: Այս առումով առանձնացվում է նախ և առաջ 66-73թթ. Հռոմեական կայսրության դեմ Մասադաամրոցի ինքնապաշտպանությունը, որը դարձավ 20-րդ դարի հրեաների ազգային ազատագրական պայքարի ու հրեական պետականության ստեղծման գործում ոգեկոչման խորհրդանիշ՝ մարմնավորելով հայրենասիրության բարձր գիտակցության, ազատության նկատմամբ ունեցած սիրո, ազգային արժանապատվության և, ամենակարևորը, մինչև վերջ կռվելու պատրաստակամությունը (fighting to the end): Մասադայի ինքնապաշտպանությունը, չնայած իր ունեցած ողբերգական ելքին, հրեության շրջանում ընկալվում է որպես փառահեղ



Կանայք Իսրայելի բանակում

հաղթանակ: Հրեա շուրջ 960 ապստամբներ, լինելով պաշարված Մասադայի ամրոցում, գերադասեցին զոհվել և մնալ ազատ, քան կենդանի՝ գերեվարության մեջ, և դիմեցին զանգվածային ինքնասպանության: Մասադայի հերոսապատման մեծարման ավանդույթը էլ ավելի նոր եռանդով շարունակվեց Իսրայել պետության հիմնադրումից հետո՝ դառնալով Իսրայելի պաշտպանության բանակի (ՑԱԽԱԼ) խորհրդանիշներից մեկը: Երկրի ԶՈՒ-ի ստեղծման առաջին տարիներից շարունակվեց հրեա զինվորականության ավանդույթը՝ կանոնավոր արշավների կազմակերպումը Մասադայի լեռ, որտեղ տրվում էր զինվորական երդում: Մասադան հաջողությամբ ներգրավվել է ինչպես պաղեստինա-իսրայելյան հարաբերություններում, այնպես էլ ժամանակ առ ժամանակ կիրառություն է ստանում Իսրայելի մերձավորարևելյան քաղաքականությունում առհասարակ: Հիշատակենք 2008թ. մայիսի 15-ին Քնեսեթում Իսրայել պետության հիմնադրման 60-ամյակի կապակցությամբ ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջ. Բուշի հայտնի ելույթը, որտեղ առանձնահատուկ նշվում էր նաև Մասադան. «Իսրայելի քաղաքացինե՛ր, Մասադան էլ երբե՛ք չի ընկնի, և Ամերիկան մշտապես ձեր կողքին կլինի»: Իսկ մինչ ելույթը՝ նույն օրը նախագահ Բուշը այցելություն էր կատարել Մասադայի լեռ:

Հրեա ժողովրդի ազգակերտման գործում մեծ է նաև 1920թ. Թել-Հայ հրեական բնակավայրի ինքնապաշտպանությունը կազմակերպած Իոսիֆ Տրումբելդորի ավանդը, որը նույնպես նոր շունչ հաղորդեց 20-րդ դարասկզբին հրեական ազգային ազատագրական պայքարին: Թել-Հայի ինքնապաշտպանությունում իր մահկանացուն կնքելիս Տրումպելդորը արտասանում է հետևյալ խոսքերը՝ «Երջանիկ է նա, ով զոհվում է հայրենիքի համար»: Այդ բառերը փորագրված են Տրումպելդորի գերեզմանին, որտեղ Իսրայելի պաշտպանության բանակի երիտասարդ զինվորականները երդում են տալիս: Տեղին է հիշատակել 1943թ. այդ առիթով Դ. Բեն-Գուրիոնի ելույթը, որտեղ նա փառաբանեց 1920թ. Թել-Հայի ինքնապաշտպանությունը՝ անվանելով այն «երկրորդ Մասադա»: Բեն-Գուրիոնի խոսքերով, ինչպես Մասադան, Թել-Հայը ցուցադրեց արժանապատվությամբ մեռնելու նոր ճանապարհ՝ պահելով զենքը ձեռքին:

***Վերջաբանի փոխարեն***

*Ինչպես հրեաների պարագայում, սեփական ռազմական հաղթանակների ու հերոսապատումների ավանդապահության հարցում տիպիկ օրինակ է նաև հայ ժողովուրդը, որը նույնպես փառաբանել ու մեծարել է իր հերոսներին ու հաղթանակները: Այս տեսանկյունից, էապես կարևորվում է Հայաստանի բնակչության և հայության շրջանում հայ ժողովրդի պատմության փառահեղ էջերի ու հերոսապատումների պատմական հիշողության վերականգնումը, ինչի կարիքը, նկատենք, վերջին շրջանում առավել քան զգացվում է: Խնդրի նկատմամբ հետևողական մոտեցումն իր հերթին կարող է նպաստել ՀՀ ԶՈՒ-ում հայ զինվորականության բարոյահոգևոր արժեքների պահպանման ու առհասարակ հայ զինվորականի վարքականոնի ստեղծման գործընթացին:*

# ՆԱԶԱՐԷԹ ՊԷՐՊԷՐԵԱՆ՝

## ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ

*Շարունակում ենք հրապարակել Բոստոնի հայկական անկախ ջայնասփյուռի փնօրեն Ժիրայր Ղարիբյանի հարցազրույցները, որ ժամանակին հաղորդվել են ջայնասփյուռով: Այս անգամ ներկայացնում ենք «Դրօշակի» նախկին խմբագիր Նազարեթ Պերպերյանի հետ հարցազրույցը, որ կայացել է 1990 թվականի հունիսի 6-ին Աթենքում:*

**Ժ. Ղ. - «Դրօշակ»ը Հ.Յ.Դ.ի պաշտօնաթերթն է եւ քաղաքականօրէն առաջնորդողի կարեւոր դեր ունի հայ իրականութեան մէջ: Հետաքրքրական պիտի ըլլար, եթէ որոշ տեղեկութիւններ հաղորդէիք մեր ժողովուրդին ներկայ խնդիրներու, հեռանկարներու մասին:**

Ն. Պ. - «Դրօշակ»ը Աթէնքի հրատարակութեան հինգերորդ տարին թեւակոխած է: Նկատի առնելով տարբերութիւնները Լիբանանի հետ, առնուազն հրատարակչական իմաստով, տակաւին մարդոյժի պակասի, այլ դժուարութիւններ ունինք: Առայժմ յաջողութեամբ կը շարունակենք դժուարութիւնները դիմագրաւել, անոնց լուծում գտնել՝ ամեն ճիգով, «Դրօշակ»ը հասցնելու համար հոն ուր կը խորհինք որ պէտք է գտնուի:

«Դրօշակ»ի խմբագրատունը կը գործէ Հ.Յ.Դ.ի կեդրոնական գրասենեակի ծիրին մէջ: Խմբագրութեան կողքին կը գտնուին մեր մամուլի տեղեկատուութեան կեդրոնը, հրատարակչական կեդրոնը: Այս երեք բաժինները կը գործեն միասնաբար, կը հասնին իրարու կարիքներու: Այդ իմաստով «Դրօշակ»ը հաւաքական աշխատանքի հայելի է: Խմբագրակազմը ներկայիս կը բաղկանայ երկու ընկերներէ: Պատասխանատուն ըլլալով, ունիմ իբրեւ օգնական խմբագիր մեր երիտասարդ ուժերէն Գէորգ Պելեանը:

Մեր հիմնական աշխատակիցները դուրսի ընկերներն են, որոնք տարիներով իրենց մասնակցութիւնը կը բերեն պաշտօնաթերթի հրատարակութեանը: Ընթերցողներուն ծանօթ անուններ են, չեմ ուզեր թուել, մոռացումներ չունենալու համար: Մեր աշխատանքի ամենէն յատկանշական երեսը այսօր՝ ինչպէս ընդհանրապէս Սփիւռքի մեր կուսակցական, այնպէս ալ ժողովուրդի հասարակական կեանքի հոլովոյթին մէջ զգալի ըլլալն է: Հայաստանէն եկած թարմ շունչը՝ որ մեզ բոլորս նորոգած է, բոլորիս տուած է եռանդ, կորով: Այդ իմաստով, այսօր, «Դրօշակ»ի խմբագրական աշխատանքներուն կիզակէտը հայրենի իրականութիւնը, հայրենի մեր ժողովուրդին մղած Արցախեան պահանջատիրական պայքարը, պետական, քաղաքական, ազգային վերազարթնումի շար-



Նազարեթ Պերպերյան

ժումն է: Այս բոլորով հանդերձ, անշուշտ, «Դրօշակ»ը իր սփիւռքեան պայմաններէն եկող հետաքրքրութիւնները, արտերկրի կեանքի առաջնորդողը ըլլալու յանձնառութիւնը կը պահէ:

Չենք ուզեր մէկ ծայրայեղութենէն երթալ միւսին, հաւասարակշռութեան հետամուտ ենք:

**Ժ. Ղ. - Հայաստանի մէջ «Դրօշակ»ը արդէն սկսած է տարածուիլ, եւ նոյնիսկ պատճենահանուած օրինակներ տեսայ: Արդեօ՞ք մօտիկ ապագային հնարաւորութիւն պիտի ստեղծուի, որ «Դրօշակ»ը ուղղակի կրպակներու մէջ վաճառուի:**

Ն. Պ. - Այդ հարցին շուրջ արդէն տարի մըն է, որ «Դրօշակ»ի էջերէն կ'արտայայտուինք, կուսակցական մեր պաշտօնական ելոյթներուն մէջ այդ ուղղութեամբ մեր ակնկալութիւնները բանաձեւած ենք: Պարզ է, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան համար դէպի երկիր քաղաքական ուղեգիծը հիմնական ռազմավարական արժէք կը ներկայացնէ, Հ.Յ. Դաշնակցութեան մամուլը, յատկապէս պաշտօնաթերթ «Դրօշակ»ը չի կրնար իր առաքելութիւնը լրիւ իմաստով պատկերացնել առանց հայրենի ժողովուրդին մէջ գտնուելու, հայրենի ժողովուրդին հետ նոյնանալու: «Դրօշակ»ը վաղը թերեւս մենք տեսնենք Հայրենիքի մէջ, անշուշտ այն չափով որ պայմանները ձեռնտու ըլլան ազատ խօսքի, քաղաքական ազատ աշխատանքի համար:

**Ժ. Ղ. - Վերջին չորս տարիներու Խորհրդային Միութեան հիմնական փոփոխութիւնները առաջացուցած են նոր պայմաններ նաեւ Խորհրդային Հայաստանի մէջ: Այդ պայմաններէն ամենէն յատկանշականը Հայաստան-Սփիւռք նոր փախյարաբերութիւններն են, ինչպէս նաեւ Հայաստանի համայնավար կուսակցութեան մօտեցումները եւ ընդհանրապէս վերաբերմունքը Հ. Յ. Դաշնակցութեան հանդէպ: Այս առթիւ ի՞նչ է Ձեր տեսակէտը:**

Ն. Պ. - Փոփոխութիւններ կան: Կարելի չէ չտեսնել: Կարելի չէ ուրանալ: Դէպի լաւը կ'երթայ Հայաստանի քաղաքական իրականութիւնը: Այս իբրեւ ընդհանուր հաստատում կատարելէ ետք, կարեւոր կը նկատեմ որոշ նկատառումներ: Նախ պէտք է նկատի առնենք բարեփոխութիւններուն հիմնական աղբիւրը հանդիսացող Գորբաչովեան վերակառուցման շարժումը: Մենք շարժումին անհրաժեշտութիւնը շեշտող եղած ենք առնուազն իբրեւ պաշտօնաթերթը մեր կուսակցութեան: Կը բաւէ վերադառնալ «Դրօշակ»ի՝ «Ազդակ Շաբաթօրեակ» հրատարակուող շրջանի խմբագրականներուն,

պաշտօնական խմբագիրներու եւ պատասխանատու գործիչներու ստորագրութեամբ լոյս տեսած յօդուածներուն, հաստատելու համար, որ 70-ական թուականներու սկզբնաւորումէն իսկ Հ. Յ. Դաշնակցութիւնը, ես կը նախընտրեմ ըսել դաշնակցական մտածողութիւնը, Հայաստանի ուղղութեամբ եւ խորհրդային իշխանութիւններու ուղղութեամբ հետեւողականօրէն օրինապահ ընդդիմադիրի կեցուածքով ներկայացած է՝ շեշտելու համար որ եւ Խորհրդային Միութեան, եւ այդ շարքին հայ ժողովուրդի քաղաքական փրկութիւնը պէտք է տեսնել հիմնարար փոփոխութիւններու մէջ: Ինչ կը վերաբերի համայնավար մտածողութեան քարացած գաղափարներուն, այն բոլոր վրէպները, այն բոլոր սխալները, որոնք 1900-ական թուականներէն իսկ մեզ բաժնած են Լենինի Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութիւնէն, ժամանակի ընթացքին գաղափարականօրէն հիմնաւորուած են տակաւին Վարանդեաններու խմբագրութեամբ լոյս տեսնող «Դրօշակ»ի էջերէն: Կարելի է խմբագրականներու շարք ներկայացնել ցոյց տալու համար, որ Հ. Յ. Դ.ն առաջին իսկ օրէն համայնավարութեան անունով Լենինի առաջադրած գաղափարներու մէջ տեսած է դիքթաթորայի սկզբունքը, որը ժողովրդավարութեան լիցքէն կը պարպէ ընկերվարութիւնը, ազատութեան գաղափարախօսութիւնը կը վերածէ բռնատիրականի:

Եօթանասուն տարի մենք կը ներկայանայինք օրինապահ ընդդիմադիրի կեցուածքով, քաղաքական յստակ որոշումով:

Ժողովուրդի կեանքին մէջ սակայն, կուգան հանգրուաններ, ուր պէտք է հաշուի նստիլ իրականութիւններու հետ: Մերն է այն բանաձեւումը, որ վարչակարգերը գնայուն են, Հայրենիքը մնայուն: Այդ հաւատքով միշտ նայած ենք Հայաստանին: Եօթանասունական թուականներուն, քաղաքական յստակ հաշուարկով, քաղաքական յստակ ուղեգիծով խորհրդային իշխանութիւններուն հասկցուցած ենք, որ իրենց եւ այն ժողովուրդներուն փրկութեան ելքը, որոնց վրայ հաստատուած է խորհրդային լուծը, թօթափումն է յոգնած եւ այլեւս սպառած, սնանկացած կարգախօսներուն, գաղափարական կաղապարներուն, որոնք, ակնարկեցի արդէն, կուգային հինէն, Լենինի օրերէն: Մեր այս գաղափարական կեցուածքը, շուրջ քսան տարի բախուեցաւ մերժումի պատին, պատճառ դարձաւ որ իրարու յետեւէ Հայաստանի եւ խորհրդային իշխանութիւնները իրենց սպասարկուներու զեկուցումներով իբրեւ ուղղակի թշնամի՝ Հ. Յ. Դաշնակցութեան դէմ սուր ճօճեն, մերժումի ենթարկեն, արգելքի տակ պահեն դաշնակցական մամուլին ազատ շրջաբերութիւնը Հայաստան: Բայց, ինչպէս կ'ըսեն, սիրտերը սահման չեն ճանչնար, միտքերը սահման չեն ճանչնար, Դաշնակցութեան խօսքը, մտածումը փաստօրէն հասաւ Հայաստան եւ ինչ որ այսօր մեր ժողովուրդի մէջ կը տեսնենք, ատիկա մեզ կը գօտեպնդէ: Մեր հաւատքի մէջ մենք սխալած չենք, հետեւողականօրէն կառչած մնացած ենք այն համոզումին, որ նոյնիսկ երկաթեայ վարագոյրներէն կարելի է գաղափարներով հասնիլ մեր ժողովրդին: Չենք զարմանար, որ այսօր Հայաստանի իշխանութիւնները իրենց կարգին հաշուի նստին քաղաքական իրականութեան հետ, անդրադառնան, որ Դաշնակցութիւնն է այն կուսակցութիւնը, որ մեր ժողովուրդին ազատագրական պայքարէն դուրս ներշնչման որեւէ աղբիւր չի կրնար ունենալ, չէ ունեցած եւ պիտի չունենայ: Այն կուսակցութիւնը, որ այս ժողովուրդին միսը-միսէն, ոսկորը-ոսկորէն ծնած է, ինչպէս ըսած են մեր զոհուած ընկերները:

Այս իրականութիւնը հայրենի մեր ընդդիմախօսներուն բերած է այն իրատեսութեան, որ Դաշնակցութեանը պէտք է տեղ մը՝ ձեւով մը կամուրջ երկարեն: Առնուազն բռնեն այն ձեռքը, որ Դաշնակցութեան կողմէ մեկնուած է շուրջ քսան տարի: Ո՛չ Հայաստանի մէջ իշխող կուսակցութեան, մեր ձեռքը մեկնուած է մեր պետութեան, որովհետեւ պետութիւնը ի վերջոյ կը պատկանի ժողովուրդին: Շրջան մը այդ նոյն ժողովուրդը ունեցած է ազատ կեանք, խորհրդարանական ազատ ընտրութիւններ, իր կամքը ազատօրէն արտայայտած է: Կարճատեւ շրջանէ մը ետք այդ հնարաւորութենէ զրկուած է, եւ համայնավար կուսակցութիւնը, Կարմիր բանակի ճնշումով, Լենին-Քէմալ դաւադրութեամբ, իր իշխանութիւնը հաստատած է հայրենի մեր ժողովուրդին վրայ: Հայրենի իշխանութիւնը տակաւին կուսակցութեան մը ձեռքին է, որուն հետ մենք գաղափարական տարակարծութիւններ ունինք, բայց, հակառակ այդ տարակարծութիւններուն, հակառակ այդ ընդդիմախօսի դիրքորոշումին, մեր ձեռքը երկարած կը պահենք: Կը մնայ սպասել, որ Հայաստանի համայնավար կուսակցութիւնը իր ղեկավարութեամբ եւ իր շարքերով անդրադառնայ թէ վերջ գտած է Խորհրդային Հայաստանի այն հանգրուանը, ուր համայնավար կուսակցութիւնը, համայնավար ղեկավարութիւնը եւ Հայաստանի պետութիւնը, կառավարութիւնը կրնային նոյնացուիլ: Եկած է ժամանակը, կեանքը կ'ստիպէ, նոյնինքն խորհրդային քաղաքական կեանքը կ'ստիպէ, որ բաժանումները յստականան: Պետութիւնը իր ազգային դիմագիծով, ազգային բովանդակութեամբ արժեւորուի եւ համայնավար կուսակցութիւնը իր չափերին, բնական տեղին յարմարի: Այդ բնական չափերը եւ բնական տեղը ի վերջոյ մենք չի պիտի որոշենք, պիտի որոշէ հայրենի ժողովուրդը: Որոշէ իրապէ'ս ազատ ընտրութիւններով: Ինչ որ այսօր տեղի կ'ունենայ, յարաբերաբար ազատ ընտրութիւն է, բայց նորէն որոշ չափով ցոյց կուտայ թէ ո՞ւր է Հայաստանի համայնավար կուսակցութեան եւ ղեկավարութեան բնական տեղը, չափը: Ատիկա յառաջիկայ օրերը աւելի ցայտուն պիտի դառնեն:

**Ժ. Ղ. - Ի՞նչ կը մտածէք Հայաստանի մէջ գործող եւ սունկի պէս բուսնող նոր կուսակցութիւններու ու կազմակերպութիւններու մասին, որոնց շարքին Հա-**

**յաստանի Համազգային Շարժումը ունի գերիշխող դիրք: Այսօր այն տպաւորութիւնը ստեղծուած է, թէ հակադրութիւն մը գոյութիւն ունի Հ.Հ.Շ.ի եւ Հ.Յ.Դ.ի միջեւ: Կրնա՞յի՞ք որոշ լուսաբանութիւններ տալ:**

Ն. Պ. - Հարցումը լայն ընդգրկում ունի եւ համապատասխան պատասխան կը պահանջէ: Առաջին հերթին կ'ուզեմ նշել, որ սունկի պէս բուսնելու վիճակը անբնական չէ: Տասնամեակներ շարունակ ժողովրդավարական մշակոյթի ենթահողէ զուրկ ժողովուրդի կեանքի մէջ բնականօրէն պիտի ստեղծուէր նման վիճակ: Ո՛չ ժողովուրդը քաղաքական անհրաժեշտ կենսափորձը ունի ազգային միաձոյլ ճակատով մէջտեղ գալու եւ իր պահանջները ներկայացնելու, ոչ ալ վարչակարգը ստեղծած է այնպիսի յարմարութիւններ, որ կարելի ըլլայ շարքերու մերձեցում, միասնութիւն իրականացնել: Հետեւաբար աւելի քան բնական էր, որ մէկ միլիոնով, միահամուռ պահանջով, մէկ կարգախօսով ոտքի կեցող Հայաստանի ժողովուրդը, երբ հարցը գար կազմակերպութիւն մէջտեղ բերելուն, ժողովրդային իր կամքը արտայայտող կառոյց ստեղծելուն, երեւան ելնէին սունկի պէս բուսնող խմբաւորումները: Այս նշումը պիտի ընել, ընդգծելու համար, որ մտահոգիչը ոչ թէ սունկի պէս բուսած ըլլալու իրողութեան, այլ այդ բազմազան կազմակերպութիւններու վստահութեան, մերձեցման, հաղորդակցութեան գետին ստեղծելու դժուարութեան մէջ կը կայանայ: Դժուարութիւնը կ'սկսի, սկսաւ այն օրէն, այն պահէն, երբ այս խմբաւորումները չկրցան գտնել զիրենք իրարու քով բերող, հաւաքական վստահութիւն վայելող ծրագիր եւ ղեկավարութիւն: Հոս արդէն սեղանի վրայ կուգայ Հ.Հ.Շ. խնդիրը, աւելի ճիշտ՝ այսպէս կոչուած «Ղարաբաղ» կոմիտէի խնդիրը: «Ղարաբաղ» կոմիտէն իր անունով արդէն Արցախեան պահանջատիրութեան ծնունդ երիտասարդական խմբակ էր, որ ե՛ւ Արցախի, ե՛ւ Հայաստանի ու արտերկրի բովանդակ հայութեան ապրումներուն, տենչերուն պատկերաւոր արտայայտիչը դարձաւ: Մէկ միլիոնով ոտքի ելնող Հայաստանի ժողովուրդը, սակայն, շատ շուտով դառն ճշմարտութիւններու պատին առջեւ կը գտնուէր: Դառն ճշմարտութիւնը այն էր, որ «Ղարաբաղ» կոմիտէն որ կը մէկտեղէր հայութիւնը Արցախէն մինչեւ Երեւան, եւ մինչեւ Մոսկուա ու արտերկրի հեռու գաղութները, բանտ մտած օրէն իսկ, մեր ժողովուրդին առջեւ կը դնէր քաղաքական իր կողմնորոշումը, ի՛ր ուղին: Վերջին ընտրութիւնները Հայաստանի մէջ լաւագոյն ապացոյցն են այն իրողութեան, որ Հ.Հ.Շ.ն քաղաքական շուտիկութեան հետեւանքով հայրենի իրականութեան մէջ փաստօրէն ստեղծեց կատարեալ Արշակաւան մը: Ձէնքը ուրկէ՞ կուգայ: Որո՞ւն ձեռքը կը գտնըւի: Ո՞վ գործադրութեան արտօնութիւն կուտայ: Ե՞րբ կուտայ: Ինչպէ՞ս կուտայ: Այս բոլորը բաց մնացած հարցականներ են, որոնք կրնան լեցուիլ ուժի մը կողմէ, որը հայ ժողովուրդի քաղաքական բերդը ներսէն հարւածելու, գրաւելու նպատակով կը շարժուի: Այդ ուժը վստահաբար կը շարժի Մոսկուայի մէջ, Կրեմլինի մէջ: Կը շարժի Բագուի, Անգարայի մէջ: Կրնայ շարժիլ աշխարհի որեւէ մէկ անկիւնը գտնուող մեծ պետութեան հաշուարկներու մէջ, եթէ այդ մեծ պետութիւնը, այս կամ այն ձեւով, Խորհրդային Միութեան ընդհանուր ճակատագրին բերումով, Կովկասի վաղուայ կացութեան նկատառումով, հետաքրքրուած է Հայաստանի բերդը ներսէն գրաւելու հեռանկարով: Այդ ուժին առջեւ մեր երկիրը, մեր Հայրենիքը բաց դաշտի վերածելու պատասխանատուութեան մեծ բաժինը միշտ վերապահուած է Հայաստանի կոմկուսի ղեկավարութեան, բայց իր պատասխանատուութեան բաժինը ունի նաեւ Հ.Հ.Շ.ն:

Հ.Յ.Դ.ն, հակառակ Հայաստան հնչող բոլոր ելոյթներուն, կուսակցական իր զգացումներուն կամ արժանապատուութեան վիրաւորուած ըլլալուն համար չէ որ երրորդ ուժի բացառման օրէնքին դէմ կը դիրքորոշուի, պանթուրքիզմը այժմէական վտանգ կը նկատէ: Պարզապէս Հ.Յ.Դ.ն մեր ժողովուրդի պատմական, իր ազատագրական պայքարի կենսափորձէն կ'առաջնորդուի եւ այս պարագային իբրեւ այդ պայքարի գաղափարական աւանդներու դրօշակակիրը, իր խորհուրդը, ուղղութիւնը կ'առաջարկէ Հայաստանի ժողովրդային շարժումներուն՝ առաջնահերթաբար «Ղարաբաղ» կոմիտէին եւ անոր սերած Հ.Հ.Շ.ին: Ոչ թէ դաշնակցականութեան հարցը, մեր ժողովուրդի համազգային պատասխանատուութեան պարտադրանքն է, որ մեզ կը դնէ ամեն բանէ առաջ պանթուրքիզմի դէմ ազգային միացեալ ճակատ առաջացնելու, Հայաստանի պետութիւնը այդ ճակատի միջնաբերդը դարձնելու հրամայականին առջեւ:

**Ժ. Ղ. - Հարցազրոյցի մը ժամանակ Հ.Հ.Շ.ական պաբագլուխները յայտարարեցին, որ այժմ իմաստ չունի խօսիլ Արեւմտահայաստանի, Հայ Դատի մասին, քանի որ պետութիւն չենք դեռեւ, այսինքն հայ ժողովուրդը պետութեան իսկական տէրը չէ: Այս առթիւ երկու խօսք կ'ուզէի լսել Ձեզմէ:**

Ն. Պ. - Արդէն Հ.Հ.Շ.ի հետ ստեղծուած դժուարութեան հիմքը կը կայանայ վստահութեան դրամագլուխի խախտումը:

Վստահութիւնը խախտուեցաւ այն օրուանէ, երբ այդքան դժուար ճանապարհէն ետքը հասանք հանգրուան մը, ուր մենք ըսինք բարձրաձայն, ուրիշները որոշ վարանումներով, թէ ի վերջոյ կարելի պիտի ըլլայ նոյն կշռոյթով քաղաքական գետնի վրայ համազգային տեսլականներու շուրջ միասնականութիւն ստեղծել: Մենք սկսանք ապրիլ այն համոզումը, որ ի վերջոյ Հայաստանի ժողովուրդը կը վերցնէ վարագոյրները եւ կ'ըսէ թէ ինչո՞ւ մենք զօրաւոր ենք մեր ազատագրական շարժումի աւանդներով եւ ինչո՞ւ Հայաստանի անդրանիկ հանրապետութիւնը իր կարճատեւ փորձառութեամբ իսկ մեր այսօրուայ եւ վաղուայ քաղաքական ուղղութեան ներշնչման աղբիւրն է: Եւ երբ կը խորհէինք որ նոյնիսկ Հայաստանի համայնա-

վար կուսակցութեան շարքերէն եկող մտաւորականներուն եւ քաղաքական գործիչներուն մօտ վերացուած են Լենինեան մտածողութեամբ, Ստալինեան ոճով պարտադրուած կաղապարները, պատնէշները, իրաւունք ունէինք հաւատալու, որ անոնց մէջ եւս տեղ մը մեր ժողովուրդը կը խօսի, ձեւով մը կը խօսի: Մենք այս վստահութեան դրամագլուխով առանց անունները ճանչնալու կը նայէինք Հայաստանի իրականութեան ծնունդը եղող «Ղարաբաղ» կոմիտէին: Օր մը, սակայն, այդ անուններէն ամենէն «լուսամիտները» յայտարարեցին, որ հայ քաղաքական միտքը ոչ մէկ իմաստութիւն ունի եւ առաջին ու վերջին իմաստութիւնները իրենց բերնէն պիտի լսենք: Այն երիտասարդներու բերնէն, որոնց քաղաքական կեցուածքները ճշտուեցան առաջին օրէն, քանի որ սկսան հայ քաղաքական միտքի աւանդներու վրայ գիծ քաշելու, թրքութեան հետ մարտավարական ինչ-ինչ խաղեր խաղալու «իմաստութիւնէ» ճառել, խորհրդային կարգերու բարեփոխման հարցին մէջ ժողովրդին խելք սորվեցնել՝ այն օրերուն, երբ մեր ժողովուրդին արիւնը կը թափուէր Արցախի մէջ, թուրքալեզու ազերիների հետ ժողովրդային ճակատի գործակցութեան եզրեր գտնելու հնարաւորութիւններու մասին ճամարտակել: Այս բոլորը, որ ըստ ամենայնի մարտավարութիւններ չեն, ի վերջոյ վստահութիւն մը խախտած են եւ ցոյց կուտան քաղաքական շուտիկութիւն մը, որուն զոհը գնաց ոչ միայն «Ղարաբաղ» կոմիտէն, այլ նաեւ հայրենի մեր պետութեան խնկական ժողովրդավարականացումի հոլովոյթը: «Ղարաբաղ» կոմիտէի, Հ.Հ.Շ.ի գիծը կը ճշտէ թէ ով հետս է, տեղ ունի Հայաստանի ժողովրդային շարժումներու իրականութեան մէջ, ով հետս չէ՝ Հայաստանի իրականութեան մէջ տեղ չի կրնար ունենալ: Այս «կամ մեզի հետ, կամ մեզի դէմ»ի մտայնութիւնը, կը խորհինք, Հայաստանի խորհրդային իրականութեան, Հայաստանին պարտադրուած կարգերուն ամենէն հոռի նստուածքն է: Այնքան ատեն որ կը շարունակուի այդ նստուածքը մնալ միտքերու մէջ՝ թէ՛ իշխանութեան վրայ գտնուող համայնավար կուսակցութեան եւ թէ՛ «Ղարաբաղ» կոմիտէի անհատ գործիչներու պարագային, մենք ամենայն մտահոգութեամբ մեր ժողովուրդը միշտ պիտի ահազանգի մէջ պահենք, որովհետեւ այդ ճամբան մեզ չի տանիր հոն ուրուն համար հայրենի իրականութեան մէջ մեր ժողովուրդը այսքան տարի ակռաները սեղմած սպասեց:

**Ժ. Դ. - Ընկ. Նազարէթ, ամբողջ հայ ժողովուրդը, եւ պէտք է ներառնեմ հայրենի ժողովուրդը, կը պատրաստուի փառաւոր կերպով տօնելու ՀՅԴ հիմնադրութեան 100-ամեակը: Կուզէի խնդրել Ձեր պատգամը:**

Ն. Պ. - Մենք՝ դաշնակցականներս Դաշնակցութեան օրը ամեն տարի կը տօնենք եւ, անկեղծօրէն, այսօր, երբ 100-ամեակը տօնելու մասին կը մտածենք, իբրեւ յեղափոխական կուսակցութիւն որոշ անհանգստութիւն կ'ապրինք: 100-ամեակ տօնելու գաղափարը մեզ կը նեղէ. ոչ թէ որովհետեւ հարիւր տարին ծանր բեռ է յեղափոխական մնալու, երիտասարդական աւիւնով պայքարը շարունակելու համար: Նեղողը այն է, որ պիտի ստիպուինք խօսիլ իրագործումներու, դերակատարումներու մասին, որոնց հանդէպ մեր ժողովուրդի նորագոյն պատմութեան տոմարները տակաւին սպիտակ բիծեր ունին, որոնց վերացնելու դժուարին պարտականութիւնը մեզի պիտի մնայ: Այս պարագային հայրենի մեր ժողովուրդը մեր գերագոյն մխիթարութիւնը եւ սփոփանքն է՝ այն իմաստով, որ հակառակ պաշտօնական բեմերէ շարունակուող մեր պատմութեան սխալ մեկնաբանութիւններուն, իր ձեւով Դաշնակցութիւնը վերակենդանացուցած է: Այս մեր 100-ամեայ ապրումներուն, խանդավառութիւններուն, ցաւերուն, մէկ խօսքով՝ ամբողջ յուզաշխարհին վրայ իր տիտանական մքնոլորտը, գոյնը դնող երեւոյթ է, լաւագոյն նուէրն է, որ մեր կուսակցութիւնը երբեւիցէ ակնկալած ըլլայ: Այսքան տասնամեակ ուրացումներէ, այսքան տասնամեակ հալածանքներէ ետք, Հ.Յ.Դ.ն ի հեճուկս արտերկրի թէ Հայաստանի իր ընդդիմախօսներուն, իր դէմ իբրեւ ուղղակի թշնամի պայքար յայտարարողներուն, մեր ժողովուրդի հոգիին եւ միտքին մէջ աւելի քան երբեք կանգուն է, աւելի քան կենդանի է: Ես անհաւանական չեմ տեսներ որ 100-ամեակի առիթով այդ կենդանի գաղափարը, կենդանի քաղաքական հանգանակը կազմակերպականօրէն դրսեւորուի, դրսեւորումը իրականանայ: Իբրեւ գաղափար եւ քաղաքական հանգանակ վերածնելէ, վերակենդանանալէ ետք, 100-ամեակի առիթով դրսեւորուի այնպիսի պայծառութեամբ, ուժականութեամբ, որ հայրենի լեռներու վրայ ինկած մեր ընկերներուն արեան, նուիրաբերման մաքրութիւնը, թարմութիւնը, շունչը իր հետ ունենայ: Միակ մեր մտահոգութիւնը եւ մաղթանքը այդ առիթով պիտի ըլլայ այն, որ Հայաստանի խորհրդային պայմաններէն եկող ժանգերը մօտէն կամ հեռուէն բիծեր չդնեն այն ծնունդին վրայ, որ պիտի ըլլայ Դաշնակցութեանը իբրեւ հայրենի իրականութեան ծնունդ:

**Ժ. Դ. - Ընկ. Նազարէթ, շնորհակալութիւն կը յայտնեմ հարցազրոյցին համար եւ նորանոր յաջողութիւններ կը մաղթեմ «Դրօշակ»ին: Հաւատանք, որ հայ ժողովուրդը ուշ թէ կանուխ կը հասնի իր գերագոյն իդէալներու իրականացմանը:**

Ն. Պ. - Յաջողութիւն նաեւ Ձեզի, ազգօգուտ անմիջական հաղորդակցութիւն ստեղծելու առաքելութեան համար:

**Ժ. Դ. - Շնորհակալ եմ Ձեզմէ:**

Յունիս 6, 1990
Աթէնք

# ՄԱՄՈՒԼԻ ԵՒ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԶԻՆՈՒՈՐ ԵՂԻՇԷ ԹՈՓՉԵԱՆ

## (ՄԱՀՈՒԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Աւօ Գաբրճեան

Ազգերու ու յատկապէս դրացի երկիրներու միջեւ համերաշխութեան գոյառման անհրաժեշտութիւնն այնքան կարեւոր ու հրամայական եղած է, որ շատերն են պաշտպանած այս գաղափարը: Պաշտպանողները պայման դրած են բնականաբար, որ միակողմանի չըլլայ՝ կեղեքող եւ կեղեքուողի խնդիր չծնի: Որովհետեւ ազգերու, ժողովուրդներու բարօրութեան եւ ապահովութեան հիմնաքարը այդ գրաւականին մէջ է. վերջին հաշուով, ո՛չ ոք կը նպաստաւորուի զինեալ բախումներէն, ճակատումներէն եւ ազգամիջեան պատերազմներէն:

Վերոնշեալ գաղափարի՝ արդարութեան թունդ պաշտպաններէն եղած էր ու կը մնայ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, ապա անոր արժանավայել անդամներէն Եղիշէ Թոփչեան իր ամբողջ կեանքը՝ 37 տարի, մինչեւ իր մահը, նուիրեց ու խօսափողը դարձաւ համերաշխութեան գոյակցումին:

Եղիշէ Թոփչեան, բուն անունով Երուանդ Թամարեան, ծնած է Ալեքսանդրապոլ, 26 Նոյեմբեր 1872-ին: Իր ծննդավայրի ծխական դպրոցին մէջ նախնական կրթութիւնը ստանալէ ետք, 1890-ին կ'աւարտէ քաղաքային ուսումնարանը: Դեռ երիտասարդ՝ կը նետուի ուսուցչական ասպարէզ. եօթը տարի կ'ըլլայ գիւղական համեստ եւ պարզ ուսուցիչ, մինչեւ 1897 թուականը կը պաշտօնավարէ Շիրակի հայկական դպրոցներուն մէջ: Հոն է, որ կը թրծուի իբրեւ հանրային գործիչ: Շիրակը կը համարուի հանրային իր գործունէութեան առաջին փորձադաշտը: Ան կը շրջի գիւղէ գիւղ եւ կը պատրաստէ Դաշնակցական խումբեր եւ կոմիտէներ: Կը կազմակերպէ նաեւ մարտական խումբեր, որոնք, իրենց ներշնչումը Եղիշէէն ստանալէ ետք, կ'անցնէին «Աւետեաց երկիր», ինքնապաշտպանութեան կռիւներ մղելու համար:

1898-ին կը մեկնի Փեթերպուրկ եւ կը հետեւի տեղւոյն Ուսուցչական Հիմնարկի դասընթացքներուն: 1900-ին կ'անցնի Պերլին մասնագիտանալու համար հասարակական գիտութիւններու ճիւղին, զոր յաջողութեամբ կ'աւարտէ հինգ տարի ետք: Նիւթական շատ անձուկ պայմաններու մէջ կ'անցընէ ուսանողական այդ հինգ տարիները:

Ուսանողական տարիներուն կ'աշխատակցի կովկասահայ մամուլին: Նոյն ժամանակաշրջանին

գերմաներէն լեզուով կը գրէ «Die ekonomiche Tuerkei» («Տնտեսական Թուրքիան») անունով գիրքը: Այս վերջինը խստօրէն կը քննադատէր եւ կը հարուածէր համիտեան պետական կեանքի ապականութիւնն ու կառավարութեան նեխած եւ կաշառակեր անձնակազմը: Եղիշէի հրատարակած առաջին գործը, սակայն, կը նկատուի «Յունաստանի անցեալից» փոքրածաւալ գիրքը՝ տպուած Ս. Փեթերսպուրկի մէջ 1898-ին: Գիրքը պատմական տեսութիւն մըն է:

Պերլին գտնուած միջոցին, արձակուրդի օրերուն, Թոփչեան կ'երթար Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրատունը: Հոն մօտէն կը ծանօթանայ Դաշնակցական մտաւորական ընկերներուն եւ հոնկէ անցնող գործիչներուն: Պերլինի մէջ, հայ ուրիշ ուսանողներու հետ, կը կազմակերպէ հանդէսներ եւ երեկոյթներ՝ յօգուտ Արեւմտեան Հայաստանին: Քարոզչական բնոյթի այդ ձեռնարկները կ'արժանանան գերմանական մայրաքաղաքի հանրութեան համակրանքին եւ քաջալերանքին:

1902-ին կը վերադառնայ Կովկաս եւ կը հաստատուի Թիֆլիս: Հոն, ինչպէս այլուր, իր ասպարէզին առանցքը կը դառնան հասարակական եւ հրապարակագրական զոյգ գործունէութիւններ:

Թիֆլիսի մէջ հազիւ լոյս տեսած էր իր խմբագրած «Արշալոյս» թերթին առաջին համարը (28 Օգոստոս 1905), արդէն ծայր կու տայ ռուսական յեղափոխութիւնը: Հոկտեմբեր 17-ի սահմանադրական մանիֆեստի առիթով տեղի կ'ունենան ցոյցեր, ընդհանուր գործադուլներ եւ ժողովրդային հաւաքներ: Թոփչեան հրապարակի վրայ է. կը խրախուսէ ժողովրդային



Եղիշէ Թոփչեան

խաւերը, աշխատաւորները: Իր ամբողջ կարողութիւնը, ժամանակն ու հմայքը գործի դրած է բռնակալութեան դէմ, էապէս տրամադրուած ռուսացման քաղաքականութեան դէմ, եւ այդ առիթով, կը պահանջէ «Ընդհանուր սահմանադիր ժողով՝ ռամկավարական լայն հիմունքներով»:

1906-1907 տարիներուն, Թոփչեան անտրտունջ կը տանի բազմատեսակ աշխատանքներ եւ պարտականութիւններ՝ իբրեւ հրապարակագիր, կազմակերպիչ, ճառախօս, դասախօս, միաժամանակ՝ Թիֆլիսի Կեդրոնական Կոմիտէի եւ Արեւելեան Բիւրոյի անդամ:

Իբրեւ գործիչ, Թոփչեան ամէն տեղ է՝ Թիֆլիս, Պաքու, Երեւան եւ այլ տեղեր: Որպէս դասախօս, հրապարակ կու գար եւ կը խօսէր աշխատաւորութեան մտքին ու սրտին: Յարգուած ու սիրուած էր հայ աշխատաւորութեան կողմէ:

Թոփչեան մասնակցած է Հ.Յ.Դաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր Ժողովին (1907): Անոր համար Դաշնակցութեան ընկերվարութիւնը հարցադրումներէ եւ տարտամ բնորոշումներէ զերծ է: Ան իր գաղափարական հիմնաւորումները խարսխեց Հ.Յ.Դաշնակցութեան Ծրագիրին վրայ եւ մերուեցաւ անոր տրամադրութիւններուն:

Եղիշէն, Չորրորդ Ընդհ. Ժողովին, առիթով մը պիտի պաշտպանէր այն թեզը, որ իրաւ ընկերվարականը երբեք դէմ չի կրնար ըլլալ ազգային իրաւունքներու պաշտպանման: Նոյն ժողովին, այս անգամ պիտի փորձէր համոզել Մուրատը, թէ հայ քաղքենին չի կրնար անկեղծ պայքարող ըլլալ մեր Դատին համար, որովհետեւ այս առաջինին եսակեդրոնութիւնը կը քողարկուի երեւութապէս յեղափոխական ձեւանալով:

Թոփչեան կազմակերպեց արհեստակցական, գործակցական, գիւղացիական միութիւններ եւ հանդիսացաւ անոնց ոգին:

1909-ին Կովկասի մէջ ցարական իշխանութիւնը սկսած էր հալածել դաշնակցականները: Միւս կողմէ, Թուրքիոյ մէջ հռչակուեցաւ Սահմանադրութիւնը: Ցարական կառավարութեան հետապնդումներէն ազատելու համար Թոփչեան կ'անցնի Էրզրում (Կարին), ուր կը հիմնէ «Յառաջ» թերթը եւ կ'ընտրուի ազգային վարժարաններու տեսուչ: «Յառաջ»ի առաջին թիւը լոյս կը տեսնէ 31 Մայիս 1909-ին:

«Յառաջ»ի խմբագրատունը դարձած է գաղափարական բոլոր տարրերու ժամադրավայրը:

Թուրքիոյ մէջ, Մարտ 31-ի հակասահմանադրական-յետադիմական շարժումի օրերուն, Երզնկայի եւ

Էրզրումի զօրաբանակներու ըմբոստացումով՝ Էրզրումի Հայոց վիճակը մեծ վտանգներէ կանխեց Ե. Թոփչեան, ան կրցաւ կանխել այդ բոլորը իր յեղափոխականի սառնասրտութեամբ եւ խոհեմութեամբ:

Թոփչեան Էրզրումի մէջ մղիչ ուժ հանդիսացաւ արհեստաւորաց, երիտասարդաց, օրիորդաց, կանանց եւ այլ միութիւններուն, որոնք մինչեւ իր մահը մնացին իր հոգատարութեան մնայուն տարր:

Թոփչեան իր ընտանիքին հետ մէկ տարի մնաց Կարին, մինչեւ իր սպանութիւնը:

11 Հոկտեմբեր 1909-ին, Պոլիսէն Տրապիզոն վերադարձի ճամբուն վրայ, Բաբերդէն վեց, ըստ ոմանց հինգ ժամ հեռու՝ Խատրակ գիւղին մօտ տեղ մը, գիշերուան ժամը 2-ին կը սպաննուի Յաբէթ Քէշիշեանի՝ խմբապետ Միհրանի եղբօր կողմէ, որ ժամեր հետապնդած էր Թոփչեանը:

Եղիշէ Թոփչեանի սպանութեան գոյժը անմիջապէս կը տարածուի ամբողջ շրջանը: Դաշնակցութեան մարմիններու եւ Կարնոյ կուսակալի ջանքերով կը ձերբակալուի ոճրագործը:

Թոփչեանի դիակը կը փոխադրուի Կարին եւ կ'ամփոփուի Ազգային գերեզմանատան մէջ:

Եղիշէ Թոփչեան հեղինակն է պատմական, ընկերային եւ տնտեսական նիւթեր շօշափող կարգ մը գիրքերու: Ան խմբագրած է տասնեակ մը թերթեր եւ անդամակցած խմբագրական կազմերուն աւելի քան 10 թերթերու՝ «Զանգ», «Ալիք», «Արօր», «Ժայռ», «Արշալոյս», «Գործ», «Յառաջ» եւ այլ թերթեր, որոնցմէ ոմանք մէկը միւսին ետեւէն փակուեցան ռուս իշխանութեանց կողմէ:

Ստորեւ ընդգծուած քանի մը կէտերով երեւան կը հանենք Թոփչեանի լայնախոհ եւ իրապաշտ մօտեցումները, որ վեր է տեղայնական նեղ եւ կարճատեւ իրագործումներէ ու ձգտումներէ:

ա. Եղիշէ Թոփչեանի յանդուգն կեցուածքին շնորհիւ է, որ հակասահմանադրական-յետադիմական շարժումի օրերուն Երզնկայի եւ Էրզրումի հայ ժողովուրդը փրկուեցաւ ստոյգ կոտորածէ. Թոփչեանի այս խիզախութիւնը օրին խոստովանեցան Վանի եւ Էրզրումի վալիները (նահանգապետ) եւ բազմաթիւ բարձրաստիճան ազատական զինուորներ:

բ. Հ.Յ.Դաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր Ժողովին ան իր մասնակցութիւնը բերաւ իբրեւ Մեծ Քաղաքի (Թիֆլիս) Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ, եւ հոն իր շինիչ եւ դրական մասնակցութեամբ կրցաւ Կովկասեան Ինքնապաշտպանութեան Նախագիծի հիմնաւորման եւ անջատական տրամադրութիւնները մեղմացնել: Նոյն ժողովին, ան եղաւ զեկուցաբերը՝ «Դաշնակցութիւնը Կովկասի մէջ կամ նախագիծը ըստ էութեան» եւ «Բռնի հանգանակութիւն» օրակարգի հարցերուն:

գ. Կը շեշտուի անոր սէրն ու գուրգուրանքը յատկապէս գիւղացիութեան նկատմամբ, զայն նկատելով ընկերվարութեան ի խնդիր պայքարին խարիսխը:

դ. Եղիշէ Թոփչեան վստահեցաւ եւ ապաւինեցաւ միմիայն սեփական ուժին. Եւրոպայէն օգնութիւն հայցելը անգործնական նկատեց, իսկ խիստ անհրաժեշտութեան պարագային՝ օժանդակ միայն:

ե. Եղիշէ Թոփչեան իր բարոյական կշիռքը եւ հեղինակութիւնը արտայայտած է նաեւ հանգանակութեան մասին, երբ ունէր իր յստակ կարծիքը, որ մարդիկ իրենց նիւթական զոհողութիւնը պէտք է բերեն գիտակցաբար եւ ոչ՝ պարտադրուած ձեւով: Դրամը ինքնին ոչինչ կը նշանակէ, եթէ չ'ընկերակցիր անոր գիտակցումը՝ ժողովուրդի լայն խաւերու պահանջներուն: Հանգանակութիւնը կը վերածուի ինքնակամ եւ ինքնաբուխ պարտականութեան:

Եղիշէ Թոփչեան խօսքով եւ գործով մնաց միշտ հաւատարիմ իրաւազրկեալ ժողովուրդներու ազատագրման եւ անոնց համերաշխ գոյակցութեան:

Եղիշէ Թոփչեանի հրապարակագրական յօդուածները եւ գրութիւնները եթէ վերլուծողական ձեւով ընթերցենք, ապա հոն պիտի գտնենք շեշտուած համերաշխութեան ոգին, որ կը բխի անոր գաղափարապաշտ էութենէն:

Այս առումով, Թոփչեանի գաղափարական եւ բարոյական մաքրութիւնը զինք առաջնորդեցին մարդկային այն հանգամանքին, որմէ կը ծնի իր առողջ դատողութեան եւ ողջմտութեան հորիզոնը:

Հայութեան թշնամիներուն, հարստահարիչներուն եւ աւերիչ ցեղախումբերուն մօտեցաւ համամարդկային մեկնակէտերէ: Հաւատաց, որ մարդիկ խորքով ազնիւ են եւ բարի: Բռնատիրական կարգերու, շահագործումներու, կեղեքումներու եւ ազգային ճնշումներու երեւոյթները հետեւանք են անտաշ հոգիներու եւ խաւարամիտ առաջնորդներու անձնակեդրոն փառասիրութեանց:

Հայ-թաթարական կռիւներու օրերուն, Ե. Թոփչեան շարունակեց տարածել համերաշխութեան, բարի դրացիութեան եւ ազգերու համախոհ կեցութեան գաղափարները, որոնց բացակայութեան պատճառաւ արտաքին ուժեր կամ իշխանութիւններ կը գրգռեն ու կը պառակտեն դրացի ժողովուրդներու

խաղաղ կեանքը:

Ե. Թոփչեան «Արշալոյս» թերթի թիւ 58-ին մէջ (Հինգշ. 17 Նոյ.. 1905, Ա. Տարի) ստորագրած է «Զգուշանանք» խորագրով գրութիւն մը՝ ակնարկելով Հայ-թաթարական կռիւներուն ան կը շեշտէր. «...Թող միանգամայն ընդմիշտ հաստատուած լինեն մեր թուրք հարեւանները, որ հայը երբեք նրա դէմ զէնք չի բարձրացնի, եթէ դադարեն թուրքական արշաւանքները, աւերմունքներն ու սպանութիւնները:

«Թող իմացած լինեն, որ հայի ջերմ ցանկութիւնն է հաշտ ապրել իր դարաւոր հարեւանի հետ, ուստի եւ նա մասնակի ու անտեղի սպանութիւններով երբեք չի ուզենայ գրգռել նրա յուզմունքը»:

Համերաշխութեան ծիրին մէջ, Ե. Թոփչեան Հ.Յ.Դաշնակցութեան եւ երիտասարդ թուրքերու միջեւ համաձայնութիւնը կը նկատէ համերաշխութեան մարմնացման եւ անոր ամրապնդման գլխաւորագոյն գրաւականներէն մէկը: Այդ առընչութեամբ, իր մտածումներն ու սպրումները ամփոփած էր «Համերաշխութիւն՝ Դաշնակցութեան եւ Իթթիհատի համաձայնութիւնը» վերտառութեամբ գրութեան մէջ, որ լոյս տեսաւ «Ազատամարտ»ի 20 Հոկտ. / 2 Նոյ. 1909 թիւին մէջ:

Իսկ «Արշալոյս» թերթի (Ա. Տարի, Ուրբաթ, 28 Հոկտ. 1905, թիւ 41) մէջ Ե. Թոփչեան լոյս ընծայեց «Ի՞նչ են ուզում հայերը» գրութիւնը, որ խորքին մէջ, Հ.Յ.Դաշնակցութեան հիմնական առաջադրանքներուն խտացումն էր: Հիմնաւորելէ ետք, թէ Դաշնակցութիւնը անջատական ո՛չ մէկ տրամադրութիւն ունի կամ քաղաքականութիւն կը վարէ, Թոփչեան, ի միջի այլոց, կը հաստատէ. «Տասն եւ հինգ տարի


Ե. Թոփչեան

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Մասն առաջին

ԹԻՖԼԻՍ
Տպարան ընկ. «Շրոմա» ✦ Типогр. т-ва «Шрома»
1909

«Հ.Յ.Դաշնակցութիւնը» Թուրքիայում, իսկ վերջերս նաեւ Ռուսաստանում արեան գետերի միջով առաջ է գնացել, միշտ բարձր պահելով վեհ գաղափարների դրօշակը, միշտ հնչեցնելով թիւրքերի ու քրտերի ականջին ազգերի համերաշխութեան ու եղբայրութեան գաղափարները»:

Յեղափոխական անբասիր գործիչ, անջատողական շարժումներու դէմ պայքարող, մտաւորական, հրապարակախօս ու մանաւանդ մամուլի եւ համերաշխութեան զինուոր Եղիշէ Թոփչեանի մահուան 100-ամեակին առիթով յարմար կը նկատենք անգամ մը եւս ըսելու, որ անոր միտքերը, թէեւ ըսուած էին Դաշնակցութեան ճամբով նաեւ, այսօր թէկուզ 100 տարիներ ետք, նոյնքան խօսուն են եւ շեշտակի, համերաշխութեան, բարի դրացիութեան եւ ազգերու համախոհ կեցութեան գաղափարները: Չմոռնալով, սակայն, պատմութեան ընթացքին այդ դրացիներու իրագործումները մեր ազգին նկատմամբ: Ուրեմն, զգօնութիւն է պէտք, ազգային բարձր գիտակցութիւն, Հայաստանի Հանրապետութեան հզօրացումի գաղափարով, անոր ճամբուն անքակտելիութիւն՝ իր հողի պաշտպաններէն եւ Ազգ. անվտանգութեան սկզբունքներէն:

# ԱՅՆՃԱՐ՝ ՓՈՔՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՄԸ... ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԴՈՒՐՍ

**Գէորգ Աբէլեան**

Այնճարը գէշ տեղ մըն է, հիմնուած գէշ թուականի մը... Այսպէս բնորոշած էր իր գիւղը այնճարցի քանքարաւոր բանաստեղծ Եդուարդ Պօյաճեան... եւ՝ մարդը իրաւունք ունեցած է: Իսկապէս այս գիւղը, որ հիմա շատերու, յատկապէս իր զաւակներուն, պարծանքն է եւ ուրիշներու նախանձի առարկան, ժամանակին չափազանց անհրապոյր վայր եղած է: Հիմնուած 1939-ին, Համաշխարհային Բ. Պատերազմի առաջին օրերուն, բնականաբար այլ բան չէր կրնար ըլլալ, քան այն՝ ինչ որ կը յայտարարէր բանաստեղծը...

Մուսա լեռան ժողովուրդը, իր հնամեայ բնօրրանէն կը քշուէր, վերջնականապէս, եւ կը բերուէր Լիբանանի Պեքաա ընդարձակ հովիտին մէկ անկիւնը եւ կը նետուէր հոն նոր կեանք, նոր բախտ շինելու: Տակաւին ընդամէնը քառորդ դարու պատմութիւն ունեցող Մուսա լեռան հերոսամարտ կերտած մարդիկ եւ անոնց զաւակները, իսպառ, պիտի զրկուէին իրենց հայրենի բոյնէն...

Տաժանակիր ճամբորդութեան մէկ կարեւոր հանգրուանին, Սուրիական ծովեզերեայ Պասիթ կոչուած վայրին մէջ, քանի մը տասնեակ գերեզման լքելէ ետք, մուսալեռցիք կը հասնէին այնքան անհրապոյր վայրը, որ խորքին մէջ կիսանապատային ու չափազանց դժնատեսիլ հողակտոր մըն էր:

Իրենք առաջինները չէին եղած հոն բնակութիւն հաստատել փորձողներէն: Ընտանիքներ եւ տոհմեր փորձած էին տուն տեղ ըլլալ հոն. չէին յաջողած: Լիբանանի նախկին նախագահներէն Իլիաս Հրաւի, իր յուշերուն մէջ կը պատմէ, որ իր մեծ հայրը Լեռնալիբանանի Թաննուրին գիւղէն իջնելով փորձած է Այնճարի տարածքին մէջ բնակիլ, ագարակ շինել: Ճահճախուտին մժեղները կոտրած են իր կամքը: Լքած է վայրը եւ փութացած Զահլէ բնակութիւն հաստատել...

Քանի մը տասնամեակներ ետք, նոյն մժեղները, կամ անոնց չեմ գիտեր քանիերորդ սերունդի անդամները, չտեսնուած ուժգնութեամբ փորձած էին փախուստի մատնել Մուսա լեռան զաւակները, որոնք յանդգնած էին հո՛ն բնակութիւն հաստատել: Նախկին մուսալեռցիք, նոր այնճարցիք, յամառած էին յաղթահարել բոլոր արգելքները եւ՝ գոյատեւե՛լ: Այս պայքարին արդիւնքը եղած էր ահաւոր. մէկ տարուան մէջ մեռած էին շուրջ եօթ հարիւր գաղթականներ... Ճահճատենդը թուրքէն



Այնճարը 1943 թվին

(որ 18 զոհ խլած էր հերոսամարտին ընթացքին) շատ աւելի զոհ խլած էր մուսալեռցիներէն:

Մժեղներուն կողքին, նորեկներուն դէմ անգութ պատերազմ յայտարարած էր բնութիւնը: Ջիւնը եղած է չափազանց առատ առաջին տարիներուն: Սնունդի չգոյութիւնը եղած է ահաւոր: Տուն ըսւածն ալ հեգնանք եղած է: Քանի մը մեթր կտաւով շինուած վրանները խեղճութեան մարմնացում եղած են պարզապէս: Ամառուան տաքը եւ փոշին եղած են ե՛ւ զզուելի ե՛ւ անգութ: Այս բոլորին դէմ կուրծք պարզելու համար, նաեւ հարկ եղած է հայհոյանքի բառամթերքը զարգացնել եւ կատարելագործել...

Բարեբախտաբար օգնող ձեռքերը անպակաս եղած են. ՀԲԸՄ, ՀՕՄ, Գ. Կիւլպէնկեան, Գարակէօզեան, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, Ամերիկայի Հայ Աւետարանչական ընկերակցութիւնը, Աղաճանեան կարտինալը եւ ուրիշներ, փորձած են մեղմել տառապանքը ժողովուրդին... Շնորհիւ եկուորներուն ապրելու կամքին եւ իրենց նպաստող կազմակերպութեանց նըւիրումին, կարելի եղած է շրջանցել առաջին տարիներու ծով տառապանքները: Ֆրանսական կառավարութեան նպաստով, սկսած է տուներու կառուցում: Վրաններուն հետ բաղդատած միասենեակ տուները եղած են կատարելութեան նման բաներ...

1946-47 տարիներուն, ժողովուրդը կիսուած է: Մեծ թիւով հայրենակիցներ, շուրջ 3000 հոգի, իսկական հայրենիքի մէջ նոր կեանք սկսելու, շատ աւելի ապահով եւ լաւ կեանք մը ապրելու հեռանկարով տարուած, փութացած են Սովետական Հայաստան գաղթել: 6-7 տարիներ առաջ ահաւոր պայմաններու տակ գաղթական դարձած մուսալեռցիներէն մեծ տոկոս մը, ահաւասիկ դարձեա՛լ գաղթի ցուպը ձեռք կ'առնէր... Հոն Ստալին պապուկին խոստացած «սովետական երջանկութի՜ւն»ը նորանոր աղէտներ պիտի հրամցնէր հայրենասէր մարդոց...

Հոս, Լիբանանի մէջ, այնճարցիք պիտի սկսէին յաղթահարել բազում դժուարութիւններ: Վերջապէս պիտի համոզուէին, որ Մուսա լեռ ետ դարձ չկար: Ուրե՞մն. հարկ էր իրենց շնորհուած արտերուն մէջ մրգաստաններ ցանել, յատկապէս




խնձոր, սալոր, դեղձ եւ տանձ... աւելի ուշ, զարկ պիտի տրուէր նաեւ այգիի մշակութեան... Բանջարեղէններ՝ կաղամբ, լոլիկ, սմբուկ եւ պղպեղ եւ լուբիայի տեսակներ իրենց ընտիր որակով պիտի դառնային փնտռուած արտադրութիւններ: Գիւղացիք իրենց թափած առատ քրտինքին դիմաց, յաճախ, շատ ժլատութեամբ կը վարձատրուէին, բայց կեանքը պիտի շարունակուէր...

Այսօր պատկերը այլ է: Միասենեակ (ֆրանսական) տուները չքացած են: Բազմասենեակ տուներ, նոյնիսկ շքեղ առանձնատուներ, տարբեր տեսք կու տան շրջանին: Հեռուէն դիտողին աչքերէն ծածկուած կը մնան տուները, առատ դալարիքի ետին: Բոլոր ճամբաները կպրապատուած են: Կեդրոնական հրապարակը իսկապէս նախանձելի պատկեր կը ներկայացնէ: Յաճախ Այնճար առաջին անգամ այցելողներ դիտել կու տան, որ Այնճար մուտքը Լիբանանէն դուրս վայր մը այցելելու տպաւորութիւն կը ձգէ իրենց վրայ:

Զուտ հայկական այս գիւղը ուսումնասիրելի շատ բան ունի իր մէջ: Կ'արժէ կարգ մը մարզեր առանձնացնել եւ սեղմ տողերու մէջ խօսիլ անոնց մասին:

Ա. Բնակչութիւն. Այնճար ունի աւելի քան 3000 բնակչութիւն ձմռան ընթացքին: Ամառը այս թիւը մեծապէս կը բարձրանայ, որովհետեւ պէյրութաբնակ եւ այլ բնակավայրերէ այնճարցիք կը փութան իրենց ամառնային արձակուրդը անցնել հոս: Նաեւ մեծ թիւով ոչ-այնճարցիներ հոս կու գան ամառը անցնելու:

Բ. Տնտեսական. Ժողովուրդին մէկ կարեւոր տոկոսը հողագործութեամբ կը զբաղի: Շատ քիչ թիւով պաշտօնեաներ կան: Մեծ է թիւը ար-

հեստաւորներու՝ ատաղձագործ, ինքնաշարժի նորոգութեան տարբեր բնոյթի վարպետներ, եւ ոսկերիչներու: Պէտք է ըսել, որ յատկապէս Լիբանանի պատերազմի տարիներուն ոսկերչութիւնը մեծ թափ ստացաւ երկրին մէջ: Այնճարցիք այս մարզին մէջ մեծապէս փայլեցան եւ կը շարունակեն փայլիլ: Մեծ ոսկերչատուներ հաստատուեցան Պէյրութի եւ գիւղին մէջ, այնճարցի վարպետներու կողմէ: Մարզը միշտ ունեցաւ վերիվայրումներ, առաւելաբար կապուած արտաքին պահանջներու հոլովոյթին հետ:

Ճաշարաններուն մարզը, որ բաւական հին պատմութիւն ունի, ներկայիս կ'ապրի իր «ոսկեդար»ը: Յսկայ ճաշարաններ կը հրապուրեն շատ մեծ թիւով յաճախորդներ, ոչ միայն շրջակայ քաղաքներէն եւ գիւղերէն, այլ նաեւ հեռաւոր քաղաքներէ եւ երկիրներէ: Այս ճաշարանները իրենց մաքրութեամբ, համեղ ճաշերով եւ համեմատաբար մատչելի սակերով, մեծ հռչակ կը վայլեն: Ասոնցմէ ոմանք հազարէն մինչեւ երկու հազար հոգիի կրնան սպասարկել, տուեալ որեւէ պահու:

Արաբ լիբանանցիք կը փութան հոս, այս ճաշարաններուն մէջ սարքել իրենց հարսանեկան խրախճանքները:

Այս ճաշարաններուն գլխաւոր մատուցումներէն մէկն է գիւղի ծկնարաններուն մէջ աճեցուած «թրայութ»ը, որ Սեւանի իշխանին մէկ զարմիկն է...



Այնճարի եկեղեցին



Այնճար, համայնապատկեր

Գ. Կրթական. գիւղին մէջ գոյութիւն ունին երեք վարժարաններ. մէն մի համայնք ունի, իր եկեղեցիին կողքին, վարժարան մը: Յայ Առաք. համայնքի «Յառաջ-Գ.Կիւլպէնկեան» վարժարանը եւ Յայ Աւետ. վարժարանը երկրորդական մակարդակի են (մանկապարտէզէն ետք Ա-ԺԲ դասարաններ): Իսկ Յայ Կաթողիկէ վարժարանը ունի միջնակարգի մակարդակ: Պէտք է արձանագրել, որ նոր հաստատուած հայկական Այնճարի մէջ, գրեթէ սնունդէն եւ տունէն առաջ, մարդիկ փութացած են կրթական կեանքին զարկ տալ: Մէն մի համայնք լարած է այծի մազէ հիւսուած հսկայ վրան, աշակերտները ուսումէ չզրկելու համար:

«Յառաջ» նախակրթարանի հիմնադրութեան մէջ մեծ վաստակ ունեցած է ֆրանսահայ մեծանուն հրապարակագիր, «Յառաջ» թերթի խմբագիր Շաւարշ Միսաքեան, որ Ֆրանսայի եւ Եւրոպայի տարածքներուն հանգանակութիւն կատարած է դպրոցի հիմնադրութիւնը յաջողցնելու համար: Պէտք չէ մոռնալ, որ Եւրոպան յատկապէս, կը տապլտկէր Բ. աշխարհամարտի կրակներուն մէջ... Յետագային, վաքսունական թուականներուն, դպրոցը ունեցած է երկրորդականի բաժին: Նկատելով Գ. Կիւլպէնկեան հաստատութեան կատարած մեծագումար բարերարութիւնը, շէնքի կառուցումին մէջ, հաստատութիւնը կոչուած է «Յառաջ-Գ.Կիւլպէնկեան»...

Այս մարզին մէջ պէտք է արձանագրել, որ Յայ Աւետ. համայնքի վարժարանը, զինք հովանաւորող գերմանա-զուիցերիական Յիլֆսպունտ մի-



«Յառաջ» նախակրթարան վարժարանը

սիոնարութեան նախաձեռնութեամբ, ունեցած է գիշերօթիկ բաժին հիմնուած 1955-ին: Շնորհիւ այդ գիշերօթիկին, մեծ թիւով աշակերտներ փութացած են Այնճար Մերձաւոր Արեւելքի զանազան երկիրներէ՝ Սուրիա, Լիբանան, Քուէյթ, Իրաք, Յորդանան, Յունաստան, նոյնիսկ՝ Եթովպիայէն: Իր փառքի տարիներուն, գիշերօթիկը ունեցած է մինչեւ 400 սան: Ներկայիս թիւն է 125: Այնճարի հռչակը տարածելուն մէջ մեծ դեր ունեցած է այս գիշերօթիկը:

Հայ կաթողիկէ վարժարանի կողքին կը գործէ Կարտինալ Աղաճանեանի անուան որբանոցը, ուր ապաստան գտած են շուրջ 50 սաներ:

Դ. Միութենական. գիւղին մէջ կը գործեն հետեւեալ միութիւնները.

1. Համազգայինի «Պարոյր Սեւակ» մասնաճիւղ, որ գիւղին մէջ զարկ կու տայ մշակութային կեանքին: Ունեցած է, տարբեր շրջաններու մէջ, թատերախումբ, մանուկներու եւ մեծերու երգչախումբեր, պարախումբ եւայլն: Այս խումբերը ելոյթներ տուած են տարբեր երկիրներու եւ քաղաքներու մէջ: Յատկապէս իր «Կոմիտաս» երգչախումբը հայ երգը հրամցուցած է արաբ եւ այլ օտար ունկնդիրներու:

Անցնող հինգ տարիներուն ընթացքին, Ռուբէն Նագեանի անունը կրող նկարչական դպրոցը բաւական յառաջդիմութիւն արձանագրած է: Անցեալ տարի, խումբ մը աշակերտներ Հայաստան եւ Արցախ այցելելով, երկու ցուցահանդէսներ տուին:

Ներկայիս, վերականգնած են մասնաճիւղին մանկապատանեկան «Կաքաւիկ» երգչախումբն ու պարախումբը:

2. ՀՄԸՄ-ի մասնաճիւղն ունի իր ֆութպոլի եւ պասքէթի դաշտերը եւ սեփական ակումբը: Ունի սկաուտական շարժում: Ունեցած է փողերախումբ, որ ներկայիս, դժբախտաբար, դադրած է գործելէ:

3. ԼՕԽ-ի «Աղթամար» մասնաճիւղը ունի սեփական կեդրոն եւ դարմանատուն: Ջուտ կանացի այս կառոյցը կը ջանայ հասնիլ ժողովուրդի առողջապահական եւ ընկերային կարիքներուն: Ներկայիս իր պահածոներու եւ անուշներու «Աղթամար» աշխատանոցը կ'ար-



Գ. Կիւլպէնկեան վարժարանը

տադրէ մաքուր եւ քիմիական նիւթերէ զուրկ զանազան տեսակի ուտելիքներ, որոնք կը վաճառուին թէ յատուկ կեդրոններու եւ թէ մեծ գեր-շուկաներու մէջ:

4. Սեւ գօտիներու քոնկ-ֆուի ակումբ, որ կը սատարէ հայ նորահաս սերունդի անդամներուն ինքնապաշտպանութեան դաստիարակութեան գործին:

5. «Յ. Գարակէօզեան» դարմանատուն. գրեթէ գիւղի հիմնադրութեան օրէն իսկ սատարած է յատկապէս մանուկներու եւ պատանիներու առողջապահական կարիքներուն: Շնորհիւ այս դարմանատան՝ մանուկներ կը ստանան պատուաստներ, դեղ, ծրի քննութիւն եւայլն: Մանուկներու մահացութեան համեմատութիւնը եթէ զերօ է ներկայիս, այդ մէկը կը պարտինք, առաւելաբար, «Գարակէօզեան» դարմանատան:

6. Յիւլֆսպունտ միսիոնարութիւն. Գերմանա-զուիցերիական այս միսիոնարութիւնը հիմնուած է 1896-ին, որպէս ուղղակի հակազդեցութիւն համիտեան կոտորածներուն: Ունեցած է լայն գործունէութիւն թէ Հայաստանի եւ թէ Կիլիկիոյ մէջ: Այնճար հասած է անոր առաջին ներկայացուցիչը, քոյր Հետուիկ, 1947-ին, ներգաղթէն ետք: Հիմնած է դարմանատուն, հոգ տարած է յատկապէս իգական սեռի դաստիարակութեան: Ստանձնելով Հայ Աւետ. վարժարանի տնօրէնութիւնը, զարկ տուած է ոչ միայն գիւղի, այլեւ Մերձաւոր Արեւելքի հայ նորահաս սերունդներու դաստիարակութեան: Ներկայիս, նոյն միսիոնարութիւնը կը պահէ «Զատիկ» մանկատունը Հայաստանի Աբովեան շրջանին մէջ:

7. Եկեղեցական միութիւններ. իւրաքանչիւր համայնքի եկեղեցի իր շուրջ ունի պատանեկան, երիտասարդական եւ տիկնանց միութիւններ: Ասոնք աշխոյժ աշխատանք կը տանին: Ունին կիրակնօրեայ վարժարան:

8. ՀՅԴ Կարմիր լեռ կոմիտէ. գիւղին մէջ գործող կուսակցական միակ կազմակերպութիւնն է սա: Խորքին մէջ, ան է որ կը ղեկավարէ, որպէս վերին իշխանութիւն, գիւղին կեանքի զանազան երեսները: Իրեն ենթակայ ըմպելի եւ ոռոգ-

ման ջուրի յանձնախումբերը առատ ջուր կը մատակարարեն տուներուն եւ պարտէզներուն: Յոգ կը տանի գիւղի ֆիզիքական ապահովութեան: Լիբանանի երկարատեւ պատերազմի տարիներուն, շնորհիւ այս կազմակերպութեան, կարելի եղաւ գրեթէ անվնաս դուրս գալ տագնապէն: Անոր կազմակերպած կամաւոր պահակախումբերը, գիշեր թէ ցերեկ, կը հսկէին գիւղին անդորրութեան եւ ապահովութեան: Կազմակերպութիւնը ունի իր «Յառաջ» պատանեկան եւ՝ երիտասարդական «Շաւարշ Միսաքեան» միութիւնները: Այս երկուքը կը ձգտին դաստիարակել պատանիներն ու երիտասարդները ազգային-կուսակցական շունչով:

9. Քաղաքապետութիւն. գիւղը ունի 15 անդամներէ բաղկացած քաղաքապետական խորհուրդ: Լիբանանի տարածքին միայն երկու հայ քաղաքապետներէն մէկը Այնճարինն է: Քաղաքապետարանը ունի զուտ հայ պաշտօնէութիւն եւ ոստիկանութիւն: Կը հսկէ գիւղի բարօրութեան եւ կ՚ապահովէ գիւղը զանազան ծառայութիւններով:

Այնճար գիւղը, հակառակ իր մեկուսացած դիրքին եւ սահմանափակ կարելիութեանց, լայն ներդրում կը կատարէ սփիւռքահայ իրականութենէն ներս: Ան ցարդ տուած է մեծ փաղանգ մը գրողներու, նկարիչ-քանդակագործներու, ուսուցիչներու, տնօրէններու, կրօնականներու (երեք յարանուանութեանց պատկանող), կուսակցական-ազգային պատասխանատու գործիչներու, խմբագիրներու, եւլն.: Նաեւ տուած է մեծ փաղանգ մը ուսեալ մասնագէտներու՝ բժիշկ, փաստաբան, երկրաչափ, հաստատութեանց տնօրէններ, դասախօսներ եւայլն: Աշխարհի չորս ծագերուն, ամէն տեղ գրեթէ, կարելի է գտնել այնճարցի մտաւորականներ, մասնագէտներ, արուեստագէտներ եւայլն:

Իր հիմնադրութենէն ասդին, Այնճար մի՛շտ կարիք ունեցած է իր սեփական միջոցներով իր ապահովութիւնը ձեռք բերել: Լիբանան նշանաւոր եղած է ապահովական խախտումներով, պատերազմներով (ներքին թէ արտաքին): Այնճարցին, գլխաւորութեամբը ՅՅԴ Կարմիր լեռ կոմիտէին, յաճախ զէնք վերցուցած է եւ հսկած գիւղին եւ ժողովուրդին ապահովութեանը: Յատկապէս 1958-ի ներքին պատերազմին, ապա 1967-ի իսրայէլեան պատերազմին, 1969-ի պաղեստինեան խլրտումներուն, 1973-ի դարձեալ իսրայէլեան պատերազմին առիթներով այնճարցին կատարած է պահակութիւն: Իսկ 1975-1990 երկարած «ներքին» ահաւոր կռիւներուն եւ տագնապալի օրերուն, մերթ հարիւրաւոր այրեր զէնքով հսկած են գիւղի անդորրութեան եւ ապահովութեանը վրայ: Մերթ շատ ճակատագրական ե վտանգաւոր պահեր ապրած է գիւղը: Սակայն շնորհիւ «պահող տղոց» անսակարկ նուիրաբերումին, միշտ ալ կարելի եղած է վտանգալից կացութիւններէն դուրս գալ անվնաս եւ ապահով:

Գիւղը համահայկական առումով եւս մեծ դեր խաղացած է այս տագնապին ընթացքին: 1978-ին եւ յատկապէս 1990-ին, երբ վտանգուած էր Պէյրութի հայութիւնը, Այնճար խաղացած է նախախնամական դեր, ապաստան շնորհելով իր թիւին քառապատիկ, նոյնիսկ հնգապատի՛կ թիւով հայրորդիներու: Տուն, անկողին հայթայթելու կողքին, նոյնիսկ հոգ տարած է եկուորներուն սնունդ եւ առողջապահական միջոցներ հայթայթելու գծով:

Այնճար, աշխարհասփիւռ մուսալեռցիներուն մայրաքաղաքը, եզակի երեւոյթ մը, եզակի փորձառութիւն մըն է հայ իրականութեան մէջ: Դաշնակցական այս գիւղը ամենայն սիրով իր թեւերը կը բանայ մեն մի իրաւ հայու, առանց դաւանանքի կամ կուսակցական խտրութեան: Ամենայն սիրով հիւրընկալած է, սովետական օրերուն, հայրենի մտաւորականներ, բանաստեղծներ եւ գրողներ: Մեն մի այցելութիւն վերածուած է փառատօնի...

Անկախ Յայաստանի պետական այրերը, թէկուզ եւ Դաշնակցութեան հակադրուած անհատներ, յատուկ ջերմութեամբ հիւրընկալուած են հոս: Թմբուկ-զուռնայով, փողերախումբով, սկաուտներով, աշակերտներով, հոգեւորական եւ միութենական պատասխանատուներով եւ ժողովուրդով, ջերմագոյնս դիմաւորուած են ներկայ Նախագահ, այդ օրերու պաշտպանութեան նախարար Սերժ Սարգիսեանը: Արտաքին գործոց այդ օրերու նախարար, տիար Վարդան Օսկանեան, եզակի պահ մը պիտի ապրէր հոս, ի տես իրեն հանդէպ ցոյց տրուած մեծ ու ջերմ ընդունելութեան:

Այնճար հայրենիքէն հեռու փոքր Յայաստան մըն է: Կ՚արժէ գուրգուրալ այս եզակի փորձառութեան վրայ: Մեն մի հայ կրնայ ինքզինք հարազատ զգալ հոս: Մեն մի հայու պարտականութիւնն է, թէկուզ եւ պարզ այցելութեամբ մը, սատարել Այնճարի գոյատեւումին եւ ծաղկումին...

## Դրօշակի շուրջը

Հարցեր շատ ունինք - ցաւոտ ու տանջող: Եւ ամենից տանջողը - կազմակերպութեան հարցը…

Պատմութիւնը դրել է յատկապէս մեր կուսակցութեան առջեւ ահագին, դժուարալոյծ մի պրօբլեմ. կռիւ մղել միաժամանակ երկու-երեք ֆրօնտի վրայ, մերթ խաղաղ, մերթ արիւնոտ, արկածալի շեշտուել միաժամանակ երեք տարբեր միջավայրում - Ռուսաստանում, Թիւրքիայում, Պարսկաստանում - եւ շեշտուել իբրեւ մի տեսակ պատերազմող կողմ, իբրեւ մեկը իրաւարար գործօններից. աշխատել, վերջապէս, բոլոր երեք ազդեցութեան շրջաններում, որպէս խաղաղ եւ բնականոն վերածնութեան մի ազդակ:

Միշտ գիտակ այդ իրողութեան եւ միշտ կանգուն պարտականութեան դաշտի վրայ, մենք երբեք չենք չափազանցրել մեր ուժերը, չենք էլ ուրացել, նուազեցրել արհաւրալի խոչընդոտները: Քայլել ենք միշտ առաջնորդուած բոլոր ճշմարիտ յեղափոխականների այն աւանդական նշանաբանով, այն կորովատու գիտակցութեամբ` որ խիզախ եւ անձնուրաց փոքրամասնութիւնը, ուր որ էլ լինի, ինչ պայմաններում էլ որ շարժուի, կարող է յամառ եւ յարատեւ ճիգերով ճանապարհ բանալ լեռնացած խոչընդոտների միջից եւ առաջնորդել ժողովուրդներին դէպի ազատութեան եւ արդարութեան հանգրուանները: Այդ հաւատը մի վայրկեան իսկ չլքեց մեզ` մեր քսանամեայ երկարաձիգ ու դրամատիկ ուղիի վրայ. յեղափոխական հինաւուրց դաւանանքը ապացուցեց հետզհետէ իր փրկարար իմաստութիւնը եւ մենք ունեցանք վայրկեաններ - կովկասեան ճակատամարտները - երբ այդ խիզախ փոքրամասնութիւնը մէկէն ի մէկ ուռճանալով, կերպարանափոխուելով, դարձաւ ահեղ ու յաղթական մեծամասնութիւն, ձուլուեց ամբողջ ըմբոստացող ժողովրդի հետ, իսկ փոթորիկն անցնելուց յետոյ, ազատութեան կարճատեւ մեղրամիսում, հանդէս եկաւ - Պետական Դումայի, Ռուսահայոց Կենտրոնական Ժողովի ընտրութիւններին - որպէս միակ ղեկավարը ժողովրդական ճակատագրի:

Եւ այսօր, երբ յետադարձ մի հայեացքով պրպտում ենք մեր ապրած հերոսական դրուագները, իրաւացի հպարտութեան հետ` մի բուռն, անդիմադրելի տենչ ենք զգում - շարունակուել ապագայում, յարատեւել նոյն ուժով ու հմայքով, նոյն տիրական եւ միշտ աւելի այլազանուող պաշտօնով, առաքելութեամբ:


XIX ՏԱՐԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐ
ԴՐՕՇԱԿ
Adr
RÉDACTION
„Dros
GENÈVE
„ԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Երբ Ռուսաստանում Հոկտեմբերեան մանիֆեստը բաց արեց սահմանադրութեան եւ ազատութեան նոր դարագլուխ, եղան մարդիկ մեր տխմարամիտ հակառակորդների բանակում, որ ասում էին. «Դաշնակցութիւնը այլեւս չունի գոյութեան իրաւունք Կովկասում, այդ իրաւունքը մնում է միայն Թիւրքիոյ մէջ»: Յուլիսեան յեղափոխութիւնից յետոյ էլ, նոյն մարդիկ, անտարակոյս, մտածում էին. «Թիւրքիայից էլ Դաշնակցութիւնը վերացաւ, պիտի վերանայ, քանի որ այլեւս պէտք չկայ մարտական-դաւադրական կուսակցութեան»…

Խիստ դիւրութեամբ էին լուծում նրանք մի մարմնի գոյութեան հարցը, եւ միանգամայն տրամաբանօրէն` իրենց չափով ու տեսակէտով: Իրենց չափը - իրենց սեփական գոյութիւնն էր, անսկզբունք, անծրագիր, անդաւանանք, առանց որոշ ու յարատեւ ուղղութեան: Եւ նոյն չափը կիրառում էին հակառակորդ մարմնի վրայ… «Նա պատահական մի խմբակցութիւն է, որ ապրել է իր շրջանը եւ պիտի լուծուի»…

Սակայն, այդպիսի «պատահականութեան» իմաստով չէ, որ Դաշնակցութեան հիմնադիրները ըմբռնել են իրենց թանկագին ստեղծագործութիւնը: Եւ նրա համար չեն հայ ժողովրդի հերոսական զաւակները տասնեակ տարիներով պայքարել ու նահատակուել կազմակերպութեան դրօշակի տակ, որպէսզի իրենց ծնողի նուիրական առաջադիմութեան դատը թողնուի մի գեղեցիկ օր հակաժողովրդական խաժամուժի ձեռքը…

Դաշնակցութիւնը յարատեւում է նոյնքան հզօր եւ պերճախօս raison d'etre-ով որքան առաջ: Մինչեւ օրս, բռնակալութեան շրջանում, նա եղել է հայ ազատագրական շարժման խորհուրդը, այսուհետեւ, սահմանադրութեան շրջանում - եթէ համարենք այն կատարեալ ու յարատեւ եւ նա դառնում է խորհուրդը հայ-ժողովրդական առաջադիմութեան: Այդտեղ նրա գործունէութեան ծրագիրը նոյնքան յստակ է, որքան առաջ: Այդտեղ նրա սօցիալ-փիլիսոփայական աշխարհահայեացքը նոյնքան կուռ, հրապուրիչ ու արգասաւոր է, որքան նախկին դաւադրական-յեղափոխական հաւատամքը:

Հարկ կա՞յ յիշել, որ այդ «նախկինը» մեր ալեծուփ ու երերուն իրականութեան մէջ դեռ պահպանում է իր ահարկու այժմէութիւնը, դեռ մերթ ընդ մերթ նշմարել է տալիս իր պաշտպանողական կամ յարձակողական վերադարձի հնարաւորութիւնները: Ռուսաստանում` նա նոյնիսկ կենդանի անհրաժեշտութիւն է…

Ահա թէ ինչու հայ ժողովրդական եւ մարտական կուսակցութիւնը միշտ անխռով անցնելու է թշնամիների ու հակառակորդների իր դէմ հանած պատնէշներից եւ շարունակելու է իր դերը, որպէս հայ կեանքի մի կատեգօրիկ իմպերատիվ, որի գոյութիւնը չեն քննադատում եւ որի առջեւ միայն խոնարհւում են:




# ՆԱ ՏԵՐ ԷՐ

Ինձ պատմել են, որ Կոնստանտին Սիմոնովի կտակը՝ իր մոխիրը շաղ տալ հարազատ Ենիսեյի ջրերի վրա, շատ էր դուր եկել Ալեքսան Կիրակոսյանին։ Մեծ երկրի քաղաքացուն վայել ցանկություն էր։ Նրա փեսան օդաչու էր, ռազմա-օդային ուժերի գեներալ, և մոխիրը շաղ տալու պարտականությունը ինքը պիտի ստանձներ։

Ալեքսան Կիրակոսյանը ոչ օդաչու փեսա ուներ, ոչ անսահման երկինք ունեցող լայնարձակ երկիր և ոչ էլ ջրառատ Ենիսեյ։ Նրա ունեցածը փոքր, ավելի ճիշտ՝ փոքրացած Հայաստանն էր, նրա երկրի երկնքում շրջապտույտ կատարող ինքնաթիռները հաճախ էին խախտում հարևան երկինքների սահմանը, նրա հարազատ գետը Ախուրյանն էր, որի ջրերը Ենիսեյ թափվելիս հազիվ թե նկատելի ալիք առաջացնեին։

Բայց բանից պարզվում է, որ փոքր երկրի քաղաքացին էլ կարող է մեծ երկրի քաղաքացու զգացողություն ունենալ, և այս իրողությունը երևակայության խաղ չէ, հաճելի խաբկանք չէ, անապատային պատրանք չէ։ Թերևս առեղծված է, սակայն պատրանք չէ։ Փոքր երկրի քաղաքացին նույնիսկ ձիավոր չէ, կառապան չէ, վարորդ չէ. էլ ո՞ւր մնաց՝ օդաչու։ Նա ոտավոր է։ Նա ոտքով է չափչփում իր փոքր երկիրը և միլիմետր-միլիմետր իրացնելով ունեցածը, հանկարծ նկատում է, որ իր տարածքն այնքան էլ փոքր չէ։ Փոքր չէ և, որ ամենակարևորն է, իրենն է, որովհետև հասցրել է իրացնել։ Ինքնաթիռով դժվար թե իրացնես հազարավոր կիլոմետրերը, եթե հաջողես էլ՝ արդյունքը նույնն է լինելու, ինչ ոտավորինը։ Տիրոջ զգացողությունը ի վերուստ տրված շնորհ չէ։ Տիրոջ զգացողությունը ձեռք են բերում։ Տիրոջ զգացողությունը վաստակ է։

Այսպես է, թե այսպես չէ, բայց Ալեքսան Կիրակոսյանին շատ էր դուր եկել

Կոնստանտին Սիմոնովի կտակը...

Եվ նա խնդրում է Համո Սահյանին ու Հրանտ Մաթևոսյանին իր մոխրով լի սափորը Ախուրյանի ձորը տանել:

- Հետներդ խաշած ձու կվերցնեք, լավաշ, թարխուն,- պատվիրում է Ալեքսան Կիրակոսյանը,- իհարկե՝ նաև օղի: Եվ կգնաք ճիշտ այն ճամփով, որով, եթե հիշում եք, մի տարի միասին ենք գնացել: Հիշո՞ւմ եք ի՞նչ մարդաբոյ ծաղիկ ու խոտ էր բուսել ձորում:

Բնության երկու երկրպագու բանաստեղծ հիացմունքով լսել են պետական գործչի քնարական, սակայն ճշգրիտ նկարագրությունը. որտեղ ինչ քարափ կա, որտեղ է գետը գծվում, որտեղ են ծաղիկները վերածվում թիթեռների, որ մասում են ջրի ցփոնները ծիածան կապում, և որ մասում՝ ցփոնների փոխարեն ձկնիկներ ցատկոտում:

- Քիչ էլ առաջանաք,- շարունակել է Ալեքսան Կիրակոսյանը,- մենավոր այն ծառը կտեսնեք և կողքի աղբյուրը: Ահա այդ աղբյուրի մոտ էլ սեղան կգցեք... **Կնստենք ու մի կուշտ կխմենք...**

Էլ ի՞նչ սափոր, էլ ի՞նչ մոխիր... Հավերժության մեջ «մահը ո՞ւմ շունն է»...

Այս պատմության ավարտը ճիշտ այն կետն է, որտեղ վերջանում է Կոնստան-տին Սիմոնովի առասպելը և սկսվում՝ Ալեքսան Կիրակոսյանինը:

Նա տեր էր: Եվ ոտավոր:

Ռուբեն Հովսեփյան



# Շոթա Ոսկանյան

Շոթա Ոսկանյան

Շոթա Ոսկանյանը ժամանակակից ամենաինքնատիպ նկարիչներից մեկն է Հայաստանում, ում արվեստը լուսավոր զգայնության ու մարդասիրության շաղախ է:

Շ. Ոսկանյանի կոմպոզիցիաները փոքրիկ ներփակ աշխարհ են, որտեղ զգացվում է հանդարտության հանդեպ քնքշանքն ու զգացմունքայնությունը: Նրանք պատկերում են մարդկային հոգու ներաշխարհը, որի մեջ էլ արտացոլվում է շրջապատող աշխարհը:

Առարկաների գեղեցկությունն ու գաղափարը Շոթայի արվեստում կենտրոնացված են պարզ գծերի, ներքին կառուցվածքների վրա: Նկարիչը դրանց կորություն, պլաստիկա, արժեք է տալիս:

Նա չի փչացնում դրանց բնական կառուցվածքը, չի փչացնում առարկաների հետ բնական ինտեգրացումը, չի վիճաբանում, գլխիվայր չի շրջում, սակայն նրա կոմպոզիցիաների ձեւերը գրավում են իրենց նյութական բովանդակությամբ: Նկարիչը առարկաների ձեւավոր մակերեսների յուրահատուկ զգացողություն ու վերաբերմունք ունի:

Նստած, կանգնած, մերկ ֆիգուրաները ոգեղեն ջերմություն են ճառագում՝ առանց սուր, ընդգծված շարժումների: Նկարչի գունեղ ներկապնակը, հիմնականում՝ շագանակագույն եւ ոսկե երանգներով, արդյունք է նրա ներաշխարհը թափանցած արեւի լույսի: Լույսն ու գույնը նրա արվեստի հիմնական միջոցն ու լեզուն են:

Ծնվել է 26 հունիսի 1960թ. Երեւանում: 1982-1987թթ. ուսանել է Մոսկվայի Գեղարվեստի համալսարանում: 1995 թվականից Հայաստանի նկարիչների միության անդամ է:





















# ԴՐՕՇԱԿ





